

ՀԱԿՈՎՐՈՍ ՏԱՇՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Հակովրոս Տաշյանը (25 հոկտ. 1866, Կարնո Արծաթի գյուղ—3 փետրվ. 1933, Վիեննա) Լեզլ և մնում է հայագիտության պատկառելի հեղինակություններից: Իր հետազոտություններով նա բարձրացրել է հայրենի բանասիրության, լեզվաբանության և պատմագիտության կշիռը համաշխարհային գիտության ատյանում:

Զափազանց լայն էին Տաշյանի հայագիտական հետախնդրությունների սահմանները՝ հայոց հին մատենագրության պատմության ու տեսության հարցեր, ինքնուրույն և թարգմանական դրական-պատմական հուշարձանների համակողմանի քննություն և օրինակելի հրատարակություններ. հայոց լեզվի պատմության հետազոտություն՝ նախագրային շրջանից սկսած մինչև 1920-ական թթ., ներառած օտար փոխառությունները, մերօրյա գիտական լեզվի հզորացնող-թյուն-տեղմանալիությունը և երկլեզվյան բառագրքերը. հայ հնագրություն ու դրամագիտություն՝ կապված պատմագիտական այլ շտապակ ճյուղերի հետ. հայոց ձեռագրերի գիտական նկարագրություններ ու հրատարակություններ՝ հանդերձ պատմաբանասիրական հմտալից ծանոթագրություններով ու դիտողություններով, որոնք հաճախ մանր հետազոտությունների տպավորություն են թողնում և ունեն աղբյուրագիտական բացառիկ արժեք. հնօրյա գրական-պատմական թարգմանական հուշարձանների՝ հայ իրականության մեջ դարերի ընթացքում կրած փոփոխությունների ճշմարտացի պատկերի վերականգնում. հայ ժողովրդի կազմավորման և հայոց պատմության խճճված խնդիրների լուսարանում. թուրք բռնապետության լծի տակ հայ ժողովրդի կրած տառապանքների և վերջին մեծ եղեռնի պատմության լուսարանություններ. հայոց մասին օտար հեղինակների հաղորդած տվյալների ամփոփումներ և Հայաստանով անցած օտար ճանապարհորդների ու բնախույզ-գիտնականների ուղեգրական երկերի թարգմանություններ. Հայաստանի պատմական աշխարհագրության ու երկրաբանությանը նվիրված ուսումնասիրություններ և թարգմանություններ. մատենագրական տեսություններ, քննախոսություններ և այլն:

Այսօրինակ բազմակուտակ հետաքրքրությունների առկայության պայմաններում, հայագիտության թված մարզերում, Տաշյան-գիտնականը դժվար թե հասած լիներ նման աննախադեպ հաջողությունների, եթե միաժամանակ չունենար տիտանական աշխատասիրություն, եթե տակավին դպրոցական նստարանից իր համար ղեկավար սկզբունք դարձրած չլիներ որևէ հարց կամ առեղծված քննելուց առաջ ձեռքի տակ ունենալու փաստական նյութի սպառնալի մթերոլայականությունը, եթե բազում տարիների տքնալան պարապմունքների ու ձեռագրական թափառումների շնորհիվ հասած չլիներ հետազոտած նյութի և բազմալեզու և բազմաբնույթ սկզբնաղբյուրների համակողմանի ու խոր իմացության, եթե իր նախորդների վաստակը չգնահատեր, նրանց հայտնած թեր ու դեմ տեսակետների հետ հաշվի չնստեր, Հիշենք նաև, որ Տաշյանը գիտեր դասական, եվրոպական և արևելյան հին ու նոր բազմաթիվ լեզուներ և իր աշխատությունների համար, սովորաբար, ատաղձներ էր հավաքում անձամբ՝ ծայրահեղ դեպքերում միայն դիմելով օտար ձեռքի օգնության, երբ անհնար էր սկզբնաղբյուրներից մեկը կամ մյուսը անձամբ թերթել:

Իր գիտական գործունեության ավելի քան քառասուն տարիների ընթացքում Տաշյանն երբեք չխորշեց ռև և աշխատանքից, երբեք չզայթակղվեց մտացածին հզորահանգումներով ու անհոգ ենթադրություններով:

Չնայած փխրուն առողջությանը, երբեմն շաքաթներով՝ Տաշյանն ընդհատում էր գիտական պարապմունքներն ու բազմակուտակ գործերը, իր հայ և օտար թղթակիցների առաջադրած այլևայլ հարցումներին զոհացում տալու համար: Նրա դասական աշխատություններից մի քանիսը (առաջին հերթին՝ «Ակնարկ մը հայ հնագրության վրա», «Էին Հայաստանի արևմտյան սահմանը») նմանօրինակ խնդրանքի կամ հրավերի առիթով են գրվել: Տաշյանն ընդառաջ էր դնում նրանց, գրում երկարապատում նամակներ, անձնական նկատումներն ու տեսակետները

շարադրում, նրանց ուսումնասիրություններին հայոց անժանոթ և շօգտագործված նյութեր ու սկզբնաղբյուրներ մատնանշում:

Տաշյանի կյանքի ու գիտական վաստակի հանգամանալից ըննությունն ու արժեքավորումն, ինչ խոսք, մեծապես կնպաստեն հայագիտության զարգացմանը, բայց նրա աշխատություններն ու հետազոտությունները ժամանակին «Հանդես ամսօրյայի» էջերում և Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրած «Ազգային մատենադարանի» հերթական հատորների շարքում փոքր տպաքանակով լույս ընծայվելուց հետո, ցարդ չեն հավաքվել, ամբողջական երկերի ձևով վերահրատարակվել, դառնալով վաղուց արդեն դժվարագյուտ մատյաններ, իսկ գիտնականի լիակատար կենսագրությունն ևս փորձ չեն արել գրելու ո՛չ նրա ժամանակակիցներն ու աշակերտները, ո՛չ էլ հայագիտության պատմության մասնագետները, մինչդեռ և՛ մեկը, և՛ մյուսը այնքան կարևոր են, այնքան ուսանելի:

Հրատարակվող նամակների հասցեատերերը համարյա բոլորն էլ անվանի գիտնականներ են, անձնական հետաքրքրասիրություններով Տաշյանին մերձավոր անձինք՝ Նիկողայոս Մառ (1864—1934), Գալուստ Տեր-Մկրտչյան (1860—1918), Գրիգոր Խալաթյանց (1858—1912), Վահրամ Բորզոմյան (1858—1943), Լևոն Մսերյանց (1867—1933), Յոզեֆ Կարստ (1871—1956...), Արշակ Զոպանյան (1872—1954):

Սույն նամակներում Տաշյանը կրկին ներկայանում է մեզ իր բազմակողմանի ու խոր դիտելիքներով, իր պատրաստակամությամբ և ընդառաջումներով, հայոց լեզվի, մատենագրության ու պատմության կենդոտ խնդիրների վերաբերյալ արտահայտած թարմ ու ինքնատիպ մտքերով, վերջապես՝ իր շարունակական որոնումներով ու ծրագրերով՝ ուսանել ուսանեմ, հետազոտել էլ միաժամանակ մատենադարանի ձեռագիր գանձերը, հանդես գալ հայոց մատենագիտության սկզբնավորման շրջանին վերաբերող հուշարձանների հետազոտությամբ ու ըննական բնագրերով: Հրապարակվող նամակները մի որոշ առումով այդ շիրականացված կամ կիսավարտ մնացած մտահղացումների սովերագրերն են:

Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Բաճաթիքական գիտությունների դոկտոր

1. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

Վիեննա, 26 հունվար, 189<5>¹

Մեծաբազմ բարեկամ.

Շնորհակալությամբ ընդունեցի՝ Ձեր պատվական գրությունը, և քիչ օր քան cliche-ն: «Հանդիսի» մեջ դրվեցավ շնորհակալություն Հնկերության բարեհաճության համար, որով շնորհեց զայն գործածելու²: Ես ալ հոս կրկին կը հայտնեմ իմ անձնական շնորհակալությունս Ձեզ, որ այս աշխատությունը հանձն առիք, և խնդրեմ խմբագրությանս շնորհակալությունը կրկին հայտնել Հնկերության վարչության: Հանձնեցի, որ այս օրերս ետ խավրեն զայն՝ Ձեր տված հասցեին, վասն զի արդեն տպված է հոգվածը:

Թարգմանության վրա բան մ'ըսել չեմ կրնար, քանի որ ուսերեն չկրցա, դժբախտաբար, տակավին սորվիլ լմնցընել, և այս տարի և ո՛չ կրնամ մտածել ասոնց վրա՝ լիովին զբաղած ըլլալով մեր ձեռագրաց ցուցակով, որմե արդեն 10 թերթ շարված է. ամբողջն 100 թերթե ավելի պիտի ըլլա: Սակայն տեղ-տեղ մթին կ'երևա ինձ թարգմանությունը, գոնե այնպես կ'երևա ինձ: Եվ որովհետև թարգմանիչը մաս-մաս կը խավրե ձեռագիրը, անհամբեր կը սպասեմ ամբողջին, որ կարենամ վերջնական տպավորություն ունենալ ամբողջին վրա: Այժմե՛ն չեմ կարող «կ'ընդունիմ» կամ «ոչ» գրել. բայց պետք ալ չկա. շատ լավ գրած եք, որ ասոնք խնդիրներ են, որոնք ո՛րչափ մեծ ասպարեզ կը թողուն պես-պես կարծյաց, ըմբռմանց, հետևություններ հանելու ևն: Արդի վիճակին մեջ խնդիրը, կարծեմ, տակավին շատ մանրամասն կրկտելու է, ոք վերջնական բան մ'ելլել կարենա: Այժմ այսքան³:

Կեսարիո առաջնորդին⁴ նկատմամբ գրածնիդ ստույգ է. պետք է ըսել, որ ինքը պաշտոնական անձ ըլլալով՝ դյուրություն ունի ազատ ժամերը գրականության նվիրելու, մինչ յուր հայրենակիցներեն շատ քիչը կրնա երազել անգամ դյուրություն մը՝ ըսենք գիրք մը ձեռք ձգելու: Հանգամանք ստուգիվ անտանելի են այն կողմերը, բայց մանավանդ ավելի խորերը:

¹ Թվականը բնագրում՝ 1894, ուղղում ենք: Պատճառաբանությունները ստորև, ծան. 2:

² Խոսքն, առանց այլևայլության, Ն. Մառի «Մի տապանաբար Յոթնգետից» հոգվածին է վերաբերում, որը տպագրվել է՝ «Հանդես ամսօրյա», 1895, № 2, էջ 33—36, Ն. Ադոնցի թարգմանությամբ: Այդտեղ խմբագրությունը շնորհակալության խոսք է ուղղում ուսական կայսերական հնախոսական ընկերությանը, «որ հաճեցավ հոգվածիս արձանագրության նմանահանությունը խավրել մեզ ի գործածություն միջնորդությամբ հարգ. հեղինակին» (նույն տեղում, էջ 33): Ըստ այսմ՝ նամակը գրված կարող է լինել 1895 թ. հունվարի 26-ին միայն և մեքենայորեն է թվագրվել 1894:

³ Խոսքը Ն. Մառի «О начальной истории Армении Анонима» աշխատության մասին է, որը Ե. Լալայանի թարգմանությամբ և «Մ. Խորենացին ըստ ուսուցչապետ Ն. Մառի» խմբագրական խորագրի տակ, մաս-մաս լույս տեսավ՝ «Հանդես ամսօրյա», 1895, № 1, էջ 18—20, № 2, էջ 54—57, № 4, էջ 108—110, № 7, էջ 195—198, № 10, էջ 297—300, և մնաց անավարտ: Բնագիրը տե՛ս «Византийский временник», հ. I, պրակ 2, 1894, էջ 263—366:

⁴ Կեսարիո առաջնորդը Տրդատ վարդապետ Պալանն էր (1850—1923), հայոց հնության հիշատակարանների՝ հնագիտական առարկաների, գրչագրերի, հազվագյուտ հրատարակությունների, տաղերի ու խաղերի եռանդուն հավաքող և հրատարակիչ:

Հ. Բառնաբաս⁵ կը խնդրե, որ գրեմ Ձեզ, թե «Հանդիսի» այս թվին քանի մ'օրինակ պիտի խավրե Ձեզ, զոր կրնաք, անշուշտ, գործածել ըստ կամս, խնդրելով որ օրինակ մ'ալ հասցընեք թարգմանչին Ձեր հոգովածին, որուն աշխատակցության համար ալ շնորհակալութիւնս կը հայտնեմ:

Մնամ ամենայն մեծարանք

Ձերդ Հ. Հ. Տ.

Ինքնագիրը պահւում է ՍՍՀՄ գիտութիւնների ակադեմիայի արխիւում (Լենինգրադ), Ն. Մառի թողոններում՝ հավաքածո № 800, ցուցակ 3, № 1371 ա, թ. 1—2 ա:

2. ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՁՅԱՆԻՆ

Վիեննա, 11 փետրվար, 95

Մեծարգո բարեկամ.

Ձեր 7 հունվարի գրութիւնն⁶ զիս շատ ուրախացուց: Մարութասի վրա արդեն երեք տարի կա, որ շատ աշխատած էի և մեծ պաշար հավաքած համեմատութեանց և ուրիշ ծանոթագրութեանց, քիչ ատենին ալ վերջնական բան մը գրել կուզեի (—այս իմաստով էր «Հանդիսի» հունվարի թվուն մեջ Եղիշեի մասին տրված խմբագրական ծանոթութիւնը⁷—): Մեկ բան կը պակասեր ինձ տակաւին. բնագիրը լիակատար չունէի՝ չկրնալով տակաւին Փարիզ այցելել, ուր երեքհատոր հսկա Ճառքներին մեջ կա. միայն քանի մը հատակտոր ունեի վենետիկին: Ուստի ապահով կրնաք ըլլալ, որ մեծ սիրով կ'ընդունեմ Ձեր առաջարկը և ի միասին կը կատարենք ամեն բան: Դուք երբ բնագիրը լրացունեք և Ձեր քննութիւնը գրեք, կրնաք խավրել. ես ալ կը ջանամ ավելցնել Փարիզի ձեռագրին ընտիր ընթերցմունքն, համեմատութեամբ ասորի բնագրին և ուրիշ գիտողութիւնք, թերևս նաև Ձերինին կրնամ կցել Ներածութիւն մ'ալ իմ կողմանէս. վերջապէս երկուքնուս ալ աշխատութիւնը կրնա քովեքով

⁵ Խոսքը Բառնաբաս Պիլեզիկեյանի մասին է, որ մշակութային եռանդուն գործիչ էր. 1898—1911 թթ. Վիեննայի Միխիթարյան մատենադարանապետը. ունի ինքնուրույն ու թարգմանական հայագիտական հոգւածներ և հետազոտութիւններ:

⁶ Գ. Տեր-Մկրտչյանի այդ նամակը, որը կարևոր խնդրի է վերաբերում, մեզ մատչելի չի եղել, թեպետ մի քանի անգամ խնդրեցինք Վիեննայի Միխիթարյաններից լուսապատճենը մեզ տրամադրել: Պիտի կարծել, նույն այս նամակով է նա մատենագիտական տվյալներ հաղորդել էշմիածնի հնագույն թղթե ձեռագրի մասին, կցելով դրանց գրչագրի հիշատակարանները և մի քանի հատված Սեկունդոսի խրատներից, որոնք Տաշյանն օգտագործել է իր «Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք. հետազոտութիւնք և բնագիրք» աշխատության առաջին մասին կցված հավելվածում (էջ 295—296, առանձին թերթի վրա):

⁷ «Հանդիսի» հիշյալ համարում տպագրված է Գ. Տեր-Պողոսյանի «Եղիշեի պատմության աղբյուրը» հոդվածը, որին, իբրև տողատակի ծանոթութիւն, Տաշյանը հավելագրել էր. «Ուրչափ ալ քանի մը կետ ալլաղգ կը բաղձայինք մեկնված տեսնել, գլխավոր կետը՝ այն թե Եղիշե Ե. գարու կեսերը չէ գրած, ուղիղ կը համարինք: Այս նկատմամբ ուրիշ անգամ պիտի խոսինք և տեսնենք, որ Եղիշեի գլխավոր աղբյուրներն մին՝ ասորի մատենագիր մ'որում հայերեն թարգմանության տարին մերձավորապէս դիտենք՝ կը ստիպե մեզ ընդունիլ, որ Եղիշե ամենն կա-նուկ Ե. գարու ճիշտ վերջն կամ Զ. գարուն սկիզբը գրած կընա ըլլալ» («Հանդիս» ամսօրյա, 1895, № 1, էջ 20):

կենալ և լրացնել գործքը. տպագրութեան ընտրութեան մասին կրնաք անհոգ ըլլալ⁸:

Միայն մեկ-երկու բան կա գիտելիք: Ըստ իս լավ չէ, ինչպես գրած էիք «Հանդիսի» միջ դնել գոնե նոր մասերը: Պատճառն հետեւյալն է. մենք սկսած ենք քննադատական հրատարակութեանց շարք մը՝ մեծադիր և օրինակելի ուճով: Առաջինն է Գաթրճյանի հորհրդամատուցքն, որուն մեջ 15 ընագրեն ավելի պիտի գա. ասկե արդէն ? Եւրո տպված է, մնացածը կը հուսամ այս տարի կ'ավարտի: Ավարտած կ'ըլլար շուտով, բայց այժմ ամեն ճգամբք հառաջ կը տարվի մեր ձեռագրաց ցուցակը, որ շատ մեծ հատոր մը պիտի ըլլա և հազիվ նոյեմբերին կ'ավարտի⁹: Ուստի անկե ետքը կրնա կարգը Մարութասի ըլլալ, որ նույնպես մեծ հատոր մը կ'ելլե:

Այս վերջին կետը դիտողութիւն մ'ընել կու տա: Գրած էիք, որ Ձեր գտած մասերը շատ մեծ չեն: Եթե այնպես է՝ կարծեմ թե էջմիածնի ձեռագիրքը լիակատար պիտի չըլլան: Մեծ ճառքն պակաս մասերը գրեթե հավասար են «Սոփիերքի» հրատարակութեան. թե՛ այս ճառին և թե՛ Շմաւոնի, Աղատի և Գոշթաղի վկայաբանութիւնքն է (—որ անկախ են իրարմե—) շատ պակասավոր են դժբախտաբար, ինչպես ասորին կը ցուցնեն: (—Հոգ չէ, որ Աստեմանի չունիք և ո՛չ ալ գաղիներն թարգմանութիւնն. կա գերմաներն ալ.— ասոնք ալ բոլորովին լիակատար չեն. լիակատար է՝ միայն ճառին սկիզբը պակսելով՝ Bedjan-ի հրատարակութիւնն ի Փարիզ, 1891): Որչափ կրցա գտնել՝ Փարիզի ձեռագիրք գոնե ճառն լիակատար ունի:

Ավելի դժվարին է վկայաբանութեանց խնդիրը: Արաւհամու թարգմանութիւնն շատ հին ժամանակ քայքայած ըլլալու է. Հայսմավուրքներու և ճառընտրաց մեջ կը թափառին շատ մը կտորներ, բայց շատ փոխված ու այլալած, և այն ընտիր լեզուն աղավաղած: Ըստ իս ասոնք ալ պետք չէ մոռնալ հրատարակութեան մեջ՝ գոնե մանրագիր դնելով իբրեւ ուրույն խմբագրութիւն: Մանոթ է Ձեզ անշուշտ, որ ասոնց մեկ քանի նա ալ թարգմանութիւն են (—անշուշտ հինն դժվարագոյն ըլլալով—) հայր Գագկա և Գրիգոր սարկավագին ձեռքը:— Ձեր հիշած վկայաբանութիւնքն՝ ամենն ալ՝ ճշտւոյն կը վերաբերին և Արաւհամու կամ Մարութասա են: Իսկ այն Հառաջաբանն՝ որ կ'ըսեք, թե

⁸ Արաւհամ խոստովանողի թարգմանած՝ Մարութասի արեւելյան վկայից հատակտորները Գ. Տեր-Մկրտչյանն ի մի էր բերել դեռ 1894-ին և այդ մասին տեղեկացրել Ն. Մանին: Բայց այն ժամանակ հնարավոր չեղավ գիրքն էջմիածնում լույս ընծայել ու այդ պատճառով, թերեւ, նա խնդրեց Հ. Տաշյանի աջակցութիւնը: Բայց հայագետների բաղձանքը՝ համատեղ աշխատասիրութեամբ գիրքը լույս ընծայել վիեննայում, նորից չիրականացավ (այս անգամ մեզ անհայտ պատճառով): 1896-ին «Արարատում» (№ 6, էջ 285) ծանուցում արվեց, որ «շուտով» Գ. Տեր-Մկրտչյանը տպարանին կհանձնի Արաւհամ խոստովանողի «նոր գտնված հատվածները»: 1897 թ. ապրիլի 26-ին ձեռագիրք ներկայացվեց գրաքննության (Տփղիս): Թույլատվութիւնն ստացվեց 1899 թ. դեկտեմբերի 17-ին: Գիրքը տպագրվեց, բայց առանց հառաջաբանի, թեև նյութերը պատրաստ էին: Ամբողջությամբ վերցրած՝ հրատարակութիւնը չգոհացրեց Գ. Տեր-Մկրտչյանին, և բնագրի մամուլներն ընդմիջտ մնացին տպարանում: 1921 թ. մայիսին, աշխատասիրողի շահվանից երեք տարի անց, անասեր Մ. Տեր-Մովսիսյանը լույս ընծայեց պատրաստ մամուլները, իր կողմից կցելով մի ներածութիւն, օգտագործելով դրա համար Գ. Տեր-Մկրտչյանի թողոններում մնացած նյութերը (երբեմն՝ բառացի): Դրանց բնագրերը հետագայում անհետացան: Հ. Տաշյանի ծրագրած գրելիքը նույն նյութի մասին, որքան գիտենք, լույս աշխարհ չի եկել:

⁹ Ձեռագրաց ցուցակի տպագրութիւնն ավարտվեց 1896 թ. սեպտեմբերին միայն:

լեզուն աղավաղ է՝ կրնա նույնպես աղավաղվալ խմբագրությանց բախտին արժանացած ըլլալ:

Առաջին ճառը Bedjan-ի հրատարակության Ա հատորին 57—122 ութա-
ծալ էջերը կը բռնեն, և այն սկզբան մասը տակավին թերի է՝ սկսելով «Սոփե-
րաց» 95 էջեն: Փարիզի հայ ձեռագիրն այսպես կը սկսի. «Զիա՞րդ ժպտեցայց
մերձենալ տկարս շարութեամբ և տգէտս գիտութեամբ առ ի պատմել զսքան-
չելի վկայութիւն վկայիցն սրբոյ» ևն: «Սոփեփրաց» հրատարակությունը բացի
թերի մասերեն՝ շատ անկատար է. տեղ-տեղ մինչև էջի շափ կտորներ կը պա-
կասին, եթե համեմատենք բնագրին հետ:

Վկայաբանությանց մեջ նախ Շմավոնի Բար-Սաբայի վկայարանու-
թյունը լավ պահված է համեմատաբար. ապա կը հաջորդեն ըստ ասորի բնա-
գրին՝ 2. Վկայաբանութիւնք Պուսակայ (թերակատար՝ ի «Սոփեփրք»), 3. «Պա-
տերազմ մեծ որ եղև ի խոժաստան»: 4. Վկայաբանութիւն Ազատայ (թերա-
կատար՝ ի «Սոփեփրք») (էջ 53: «Ագբղա» գրչի սխալ է փոխ. «Ազատ»): Ասոնք
և Գոշթաղդի մասերը շատ աղավաղ և խառնակ են «Սոփեփրաց» մեջ: — Ասկե
ետքը պիտի գան ըստ ասորի բնագրին՝ 5. Վկայաբանութիւն Թարբեհի և ըն-
կերաց, 6. Վկայաբանութիւն Մելեայ եպիսկոպոսին Շօշայ, Աբրուսիմեայ երի-
ցու և Սինէի սարկաւագին (ձեր հիշածը ճիշտ այս կտորն է), 7. Վկայաբա-
նութիւն Շահդուստի, եպիսկոպոսին Սղեկայ և Տիգրեոնի և ՃՀԸ ընկերաց, 8.
Վկայաբանութիւն Բարշաբեայ և Ժ ընկերաց, 9. Վկայաբանութիւն Ներսէսի
եպիսկոպոսի և Յովսեփայ աշակերտին ի Շահարքադատայ, 10. Վկայաբանու-
թիւն Դանիէլի և Վարտայ կուսին, 11. Վկայաբանութիւն ՄԺԱ արանց և Թ կա-
նանց, 12. Վկայաբանութիւն Բարբաշմեայ և ընկերաց (ձեր հիշածը), 13.
Վկայաբանութիւն վկայից որ սպանան ուրեք ուրեք ևն (ձեր հիշածը), 14. Վկա-
յաբանութիւն Յակոբայ երիցու և Մարեմայ հաւատաւորի, 15. Վկայաբանու-
թիւն Թեկղեայ հաւատաւորի և Դ ընկերաց, 16. Վկայաբանութիւն Բարխադ-
բեշաբայ (որդի Կիրակէի) սարկաւագի, 17. Վկայաբանութիւն որդւոց գերե-
լոց, 18. Վկայաբանութիւն ի վկայից. Արդէայ, Աբղեշուայ, Աբղալահայ ևն,
19. Վկայաբանութիւն Ակեփսիմեայ (Ակեբշմայ) և Յովսեփայ երիցու և Այի-
թալայ սարկաւագի: — Աստեմանի զասոնք կը դնեն բուն գրքին մեջ, և հավել-
վածի մեջ՝ 20. Վկայաբանութիւն Յովնանու, Բրիքեշուայ, Զեբինեայ, Ղազարու,
Մարութայ, Ներսէսի, Նղիայի, Մակարեայ են: Bedjan ալ ունի ճիշտ նույնները.
բայց մեկ-երկու բան ավելի, զոր օրինակ՝ Բահնամայ (Վահնամ) վկայաբա-
նությունն, Կարդուգայ, Փեթիոնի, Անահտայ, Աբդուրորմզդայ, Սաբայ, Պետ-
րոսի ևն: Զեմ հիշեր «Արեւմտյան» վկայքն, որոնք անշուշտ չկային Աբրահա-
մու «Արեւելեան» վկայից թարգմանության մեջ:

Արդ կը տեսնենք, որ մեծ գործք մըն է, զոր պետք ենք ջանալ ըստ կարելի-
ւոյն լիակատար ընել (—Bedjan 688 էջ է). ըստ կարելիւոյն ըսի, վասն զի
շատ բան, անշուշտ, անհետ կորսված է, մաս մ'ալ թափտառած հոս-հոն՝ բայց
այլակերպած ու աղավաղվալ. երբ լավագոյնը չգտնվի՝ պետք ենք զասոնք
ալ առնուլ, բայց ուրիշ տառով դնելով ևն զանազանել ընտիրներեն: Կը հու-
սամ, որ էջմիածնի անհուն հավաքման մեջ անկարելի պիտի չըլլա շատ բան,
որ ինձի համար կորսված են, երևան հանել:

Առ այժմ այսքան. դժբախտաբար այնպես զբաղած եմ Յուցակով, որ Մա-
րութայ և նմաներ այժմ մեկդի դրած եմ: Բայց երբ Դուք պատշաճ դատեք

ձեռագիրնիդ խավրելու՝ ըլլա՛ լոկ քննությունը կամ բնադրեն ալ՝ կը ջանամ կրցածս ընել՝ «Հանդիսի» մեջ կրնան քննութենեն մասեր, թերևս նաև ամբողջը դրվիլ, առանց ասով բուն գրքին վնասելու։ —Քիչ օրեն կը խավրեմ Գաթրճյանի «Խորհրդամատուցեն» թերթ 8—9, երբ տպվին, որպեսզի գաղափար ունենաք տպագրության ձևին, տառերուն են։

Մաղթելով հաջողություն՝ մնամ

Ձերդ Հ. Հ. Տաշյան

<Ե. Գ.> Կը ներեք հապճեպով գրելու։— Թերևս այս տարվան վերջերը կարենամ փարիզ այցելել. 94-ի երկու ամիս Գերմանիա և ի մասնավորի Պերլին էի։

Ն ու յ ն

Ինքնագիրը պահվում է՝ Մատենադարան, Գ. Տեր-Մկրտչյանի թղթոցներ, № 24/176 (հայ)։

3. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ

Վիեննա, 3 մարտ, 97

Մեծարգո բարեկամ.

Ստացած եմ ժամանակին կրկին քարտեսները (հունվար 29 և փետրվար <վար> 6)։ Երկար սպասեցիք այս երկտողիս, որի հապաղելու պատճառը դյուրավ կրնաք գուշակել։ Արդեն գարունը կը սկսի հոս, և ես տակավին՝ ամեն ճգանց հակառակ՝ չկրցա ավարտել «Պատարագամատուցքն», որ մեծ ծավալ առավ¹⁰։ Հուլիս ունիմ այս ամիս անպատճառ ավարտելու։ Այս միջոցին բազմաթիվ նամակներ ալ եկան ամեն կողմեն, այլևայլ խնդիրներու համար, և ումանք շատ ալ ժամանակ սպառեցին՝ մինչև ամեն կետի պատասխան տալ կարելի եղավ։ Շատերն ի հարկե դրած եմ մեկդի՝ լավ առիթի սպասելով։ Գեշ թղթագիր կ'ըլլամ ասով, բայց առ այժմ ուրիշ կերպ կարելի չէ։

Շատ փնտռեցի Ձեր հիշած վերջավորությունը գտնելու¹¹, բայց մեր ձեռագրաց մեջ չգտա և ո՛չ ալ ծանոթ ուրիշ տեղ մը։ Քանի որ Ձեր երկրորդ քար-

¹⁰ Հ. Գաթրճյանի այս աշխատության լրացումն ու հրատարակումը Տաշյանին է հանձնարարվում 1893 թ.։ Նա սկզբում ստուգում է բնագրի՝ Ք. Սպենյանի խմբագրած տարբերակը, որ կատարվել էր հեղինակի (Գաթրճյանի) հսկողությամբ ու համաձայնությամբ, ապա կարգավորում ու լրացնում է այն, մաս-մաս հանձնում տպարանին և հետևում սրբագրությանը։ Փաստորեն այդ շուրջ 770 (իս+747) մեծադիր էջերից բաղկացած հսկա հատորի կեսից ավելին, սկսած 341 էջից (բացառությամբ 501—507 և 557—558-ի) Տաշյանի գրածն է, իսկ առաջին մասում էլ արել է բազում լրացումներ։ Աշխատանքն ավարտվեց և լույս տեսավ 1897 թ.։

¹¹ Խոսքը Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղէտից» պատմական վիպասանության եզրափակիչ տողերի (մեջ են բերված նամակում) մեկնությանն է վերաբերում։ Եթե Ե (—5) և Ն (—400) թվերը մատնանշում են տողերի քանակը, ապա վերջիններն հիշյալ վիպասանության մեջ ո՛չ թե 405 են, այլ՝ 460։ Հրատարակելով Խլաթեցու երկը «Արարատում» (1897, ապրիլ, կա նաև առանձնատիպ), Խլաթեցուն առկախ էր թողել «Եւ զեչն ու նուն հասոյց ի մին», «Եւ չն առաջին և նուն յետին» արտահայտությունների մեկնությունը, ժամանակ անց դիմելով Տաշյանի օգնությանը, քանի որ վերջինիս կազմած ձեռագրաց ցուցակում (Վիեննա) նմանաբնույթ³ հատվածներ կային։ Տաշյանն, ինչպես տեսնում ենք, հրաժարվում է ենթադրություններով կերտել նրան։

տը չէր եկած, համամիտ էի կարծելու, թե խլաթեցի Գանձարանի մը վերջաբան ըրած ըլլար այն տողերը, որուն կը հարմարին ալ անոնք (ս...որ ետ ինձ կար տրկար անձին— Եւ զՆՆ ու զՆուն հասոյց ի մին— Բամեալ գանձեալ որ ի միջին— Են առաջին ու Նուն վերջին)։ Այն ժամանակ կրնար ենթադրվիլ, որ Են ու Նուն յուր Գանձերու սկզբան և ավարտման գանձաթվերն էին, ինչպես ամեն Գանձարաններ լուսանցքի վրա ունին սուլնալիսի կարգաթվերը։ Բայց «ն» (400) զանձաթիվ հավանական չէր։ Միջանկյալ ըսեմ, որ խլաթեցվո Գանձերու, որ սովորաբար ցիրուցան կը դնուվին Գանձարաններու մեջ, ամփոփ հավաքում կ'երևա էջմիածնի թ. 282 ձեռագիրն, որու մեջ կա նաև հիշատակարան 16 տողով «ի Մերենց Գրիգոր Վարդապետէ շինողի գանձուցս» (տպ. «Արարատ», 1895, էջ 129—130)։

Երկրորդ քարտեսը խնդիրը լուսավորեց գոնե շափով մը, որ կը հաղորդեիք 460 (նկ.) տողով վիպասանության մը գլուտը, որ կ'ավարտի հիշյալ տողերով։ Այդ «Յիշատակարան աղէտից ի ժամանակի մերում, զոր ասացեալ է Գր. Վրդ. խլաթեցույ» ինձի միայն ընդհանրապես ծանոթ էր. այսինքն՝ դիտեի ձեռագիր ցուցակն մը միայն, որ կա խլաթեցվո «Պատմութիւն նահատակութեան վկայից իւրոյ ժամանակին» (խորագիրս անշուշտ ձեռագրաց համեմատ չէ), բայց և ո՛չ տող մը ծանոթ է ինձ այս գրվածքն, և ո՛չ ալ տպագրութիւն մը կարծեմ եղած է (որ արդեն անհավանական է հինքյան)։ Համեմայն դեպս հիշյալ վերջաբանը կրնա համարիլ 460 տնով վիպասանութիւն մը, եթէ մանավանդ բուն մարմինը կամ յուր ժամանակակից իրաց պատմութիւնը սկսի «ն» տնով և ավարտի «ն» տնով, մնացեալ 60 տունը վերջաբան ըլլալով։ Թե ուղիղ է այս կամ ո՛չ, Դուք միայն կրնաք որոշել, առձեռն ունենալով նույն պրութիւնը։

Անշուշտ, Չամչյան (Գ, 451) այս վիպասանութիւնը կը հիշէ։ Զարմանք է միայն, որ ձեռքս եղած վեներտկո ձեռագրաց ցուցակին մեջ չեմ գտներ այսպիսի բան մը նշանակված։ Այնտեղ կը նշանակվին (յուրաքանչյուրին սկզբնատողերով) 23 աղերսական Տաղեր, 41 Գանձեր, հետո «Որոշումն վասն խնդրոյ իրիկ Պսակի» և «Թուղթք» խլաթեցվո, ինչպես նաև «Խրատ ժամատեղեաց»։ Ուրիշ ցանկն մը գիտեմ «Ճառ ի ծնունդ Աստուածածնի» և «Ներբող տնօրինական Տեղեաց», ինչպես նաև հիշյալ «Պատմութիւն նահատակութեան վկայից» են։

Տպագրութիւն մ'այն վիպասանության անծանոթ է ինձ.— բայց անկարելի չէ։ Շատ և շատ բան կա ցիրուցան և մոռցված մեր ամեն թերթերուն (հին ու նոր) մեջ, որոնք պրպտված ու մոռացութենե ազատված չեն։ Քիչ բան միայն կրցած եմ մինչև ցայժմ մի առ մի աչքն անցընել և նշանակել, մնացյալն ապագային թողլով։ Հիշեմ որ «Գրիգոր Երիցու» անվամբ նման տաղ կամ «Յիշատակարան» մը կա՝ պատմութիւն անցից յուր ժամանակին, որ կը սկսի «Ապէնեաղ և անկարօտ ի սկզբանէ երեքսրբեան» են։ Գրութիւնս լույս տեսած է ի «Ճոռաբաղ», 1861—2 թ., էջ 17—23, և ԺԴ դարեն էլ կամ 1335 տարիեն, ինչպես հայտն է սա խոսքն. «ի յԱդամայ եղև սկիզբն, մինչև ի յայս նոր թուական. եօթնհարիւր և չորս (=1335), որ զօրացան ազգն Հազարեան» են։ Վերջավորութիւնն է այսպես. «Եթէ զանունս հարցանես, Գրիգոր չերէց եմ անարժան, որ կարգեցի յայսմ տառի, տունս թըւով հարիւր և քսան»։ Ատկէ հայտնի է, որ 120 տնով 1335-ին գրված «Յիշատակարանը» չի կրնար նույն ըլլալ Զեր

հիշած հալթեցվո «Յիշատակարանին» հետ՝ 460-տողով¹²։ Բայց թե նմանություն մը կա և ո՛ր աստիճանի, Դուք միայն կրնաք որոշել։

Ահա ինչ որ ինծի ծանոթ է և ինչ որ կրցա առ այժմ գտնել։ Հրատարակության արժանի է, անշուշտ, հալթեցվո տաղը. այս կարգիները իրենց ժամանակակից պատմության համար թանկագին են։ Կը սպասեմ նաև Մնացորդաց գրոց հրատարակության։ Հուսով եմ, որ ասորիները շատ դժվար չի գար, որ ամենեն մեծն է, շատ արդյունավոր պիտի ըլլա մեր գրականության քննության համար։

Ողջույն ամեն ծանոթներեն, որ հոս են։ Մնամ մեծարանոք

Զերդ

Հ. Հ. Տ.

Ինքնագիրը պահվում է՝ ԳԱԹ, Գ. հալթյանի թղթեր, № 768:

4. ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻՆ

Վիեննա, 24 դեկտեմբեր, 1898

Մեծազոք բարեկամ պր. Արշակ Զոպանյան.

Ներողամիտ կը գտնվիք անշուշտ երկարատև լռությանս։ Զեզի անծանոթ չէր դրությունս անցյալ տարի¹³, որ ստիպեց զիս, ահա գրեթե տարի մ'ավելի է, հեռու մնալ Վիեննային՝ նախ գյուղագնացությամբ և հետո (մայիսի 26-են վեր) ուղևորությամբ յԱրևելս, որ դժբախտաբար անհաջող եղավ։ Կ. Պոլիս միայն ոտք դրի և ո՛չ քայլ մ'անգին, ուստի պետք չեք զարմանալ, որ շուտով վերադառնալ ստիպվեցա և ո՛չ երկար զբաղիլ էջմիածնի գրատուն գանձերով (ինչպես գրած էիք առ վերապատվելի հայր Բառնաբաս գրած քարտին մեջ)։ Պատճառը պարզ է. Ո՛չ միայն էջմիածին, այլ և ո՛չ Տրապիզոն ու Կարին՝ հայրենիքս կրցա ոտք կոխել։ Ինչո՞ւ. ճիշտ ես ալ չեմ գիտեր. բայց կ'երևա գիտությանմբ զբաղիլը մեծ ոճիր մըն է եղեր ժԹ գարուն վերջերը, որով մեծապես վտանգավոր՝ նաև հայրենիքն այցելել իբր 20 տարի բացակա գտնվելն էտքն ալ։ Կարճ կապեմ. հունիսի 1-են վեր՝ երբ Կ. Պոլիս մտա, մինչև նոյեմբեր 11 անընդհատ աշխատեցա սա անիծյալ քեզիսին ձեռք բերել, և չեղավ։ Խնդիրը գնաց Ներքին և Արտաքին գործոց նախարարությանց, անկե վեզիրին՝ որ հրաման տվավ, բայց այս հրամանն ետ առնվեցավ անմիջապես պալատեն, ուստի—N. B.—ի՛րապես պիտի ելլեր և տակավին պիտի ելլե։ Ես Ավստրիո պաշտպանության թուղթն ունենալով՝ անոնց հյուպատոսարանի և դեսպանատան ձեռք միայն կրնայի գործել, որոնք չկրցան բան մը հաջողցնել։

Նույնպես Ռուսիա մտնելու համար՝ անցագիրս *visé* ընել տալ կարենալու համար հատուկ հրաման պետք էր գալ Պետերբուրգի Սինոդեն. (—վասն զի կաթոլիկ քահանայից համար այս օրենքը կա։—) Հունիսի սկիզբը խավրվեցավ խնդրագիրը. իսկ պատասխանը չեկավ նաև ցայսօր, կամ թերևս ժխտա-

¹² Բնագրում՝ «460 տնով», ուղղում ենք՝ «...տողով», քանի որ սույն նամակի նախորդ պարբերության մեջ գրված է այդպես, և վիպասանությունն էլ ճիշտ 460 տողից է բաղկացած։

¹³ 1897 թ. Ա. Զոպանյանը մի որոշ ժամանակ պարապում էր Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում։ Այդ ժամանակ Տաշյանը նոր էր, ավարտել Գաթրճյանի թերավարտ աշխատության լրացումն ու հրատարակումը։

կան պատասխան եկավ, զոր ինձի իմացընել շուգեցին ավստրիական պաշտոնյայքն ի Կ. Պոլիս:

Այսպես կամ այնպես՝ հինգ ամիս ի զուր Պոլիս սպասելեն ետքը, ձմեռը մերձենալով՝ ստիպվեցա Վիեննա դառնալ, և տակավին կը սպասեմ ելից խնդրին: Երկրորդ փորձ մ'ալ պիտի ընեմ անշուշտ. բայց կը հաշողի՞ արդյոք՝ խնդիր է...

Տաճկաստանի համար բավական լուսավորվեցավ խնդիրը. վասն զի նախ շատ բարեխիղճ լրատուք զիս լավ մը սեցուցած կ'երևան՝ իբր թե Փարիզ գնացած ճառեր խոսած ըլլամ են ևն¹⁴, գոնե եթե կրնամ հավատալ առնված տեղեկությանց. նույնպես թե բարձրաստիճանի մը շղերուն դիպած ըլլա ավստրիական անցագիր ունենալս, Պոլիս հայոց դպրոցներն ևն այցելելս ևն ևն:— Ինչ և իցե, նայինք ի՞նչ ելք կ'ունենա. թերևս Ավստրիո դեսպանատունն յուր տված խոստումը՝ խնդիրը կարգի բերելու հարմար առթիվ, ի զուրհ հանե, թեև հույս չունիմ:

Կը խնդրեի, որ այս գրածներս ծածռել մնային. հրապարակ ելնելով պարտապես ավելի վնաս կա խնդրին քան օգուտ, մանավանդ քանի որ վերջնականապես վճռված չէ:

Կրնաք ուրեմն գուշակել, թե ի՞նչ տրամադրության մեջ դարձա, ուստի առ այժմ գործք մ'անգամ սկսիլ՝ մտաց կարևոր ամփոփությանը՝ դժվար է:

Շնորհակալությամբ ստացա «Անահիտ» թերթիդ թիվը¹⁵, զոր խավրել բարեհաճած էիք: Կը մաղթեմ, որ անձանձրույթ և հաշողության մը շարունակեք սկսած լավ գործքն, որ գեղեցիկ գաղափար մըն է, միանգամայն հուսալով, որ պետք եղած դուրսբերումները կ'ունենաք ավելի զարգացնելու թերթը: Մեծ ուրախությամբ կարդացի Ձեր թերթին երկու թվերն ալ. և ուրախությանս արտահայտությունը թերևս ցուցնեի մասնակցելով Ձեր թերթին գրվածքով ալ, եթե չըլլար արդի անտրամադրությունս և հոգնությունս, և եթե չորոցամաք գրող մը չըլլայի՝ շատերուն համար բոլորովին շոր ու հին նյութերով զուլխն ուռած: Ապագան թերևս դարման բերե երկուքին ալ:

Առ այժմ մաղթելով Ձեզ հաջողություն և լավագույն օրեր մերձակա ամառորա առթիվ՝ մնամ հարգանք

Ձերդ

Հ. Հ. Տաշյան

Ինքնագիրը պահվում է՝ ԳԱԹ, Ա. Զոպանյանի թղթեր, № 6903:

5. ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄՅԱՆԻՆ

Վիեննա, 10 հունվար, 99

Մեծաբզո բաբեկամ.

Շնորհակալությունս կը փութամ հայտնել ամանորա առթիվ ընդունած քարտիս: Կը հուսամ, որ իմ ալ թղթիկս ժամանակին կը հասնի Ձեր ձեռքը:

¹⁴ Տաշյանը Փարիզ մեկնելու դիտավորություն ուներ 1895 թ. վերջերին: Մեկնել է նաև կամ ի՞նչ ճառեր խոսել (անշուշտ՝ Հայաստանում թուրք շարդարարների սկսած սպանդի ու կոտորածների դեմ), դժվարանում ենք որոշակիորեն ասել, որովհետև կենսագիրը նման բան չի հիշում:

¹⁵ «Անահիտ» հրատարակությունը (լույս է տեսել դեկտեմբերից) «Հանգստե ամսօրյան» ողջունել է փոքրիկ ժանուցմամբ (№ 12, էջ 383):

Հանկեղծ սրտե կը մաղթեմ Ձեզ և Ձեր ընտանյաց քաջառողջություն և երջանկություն ու ամեն բարիք...

Այս առթիվ կը խնդրեմ Ձեր ներողամտությունն այն թերությանս, որ այսօր առաջին անգամ կը դրեմ Ձեզ, մինչդեռ պարտքս էր շատոնց արդեն հայտնել Ձեզ նաև թղթով խորին շնորհակալությունս այն բարեկամական ցույցերուն համար, որոնց արժանի համարվեցա Ձեր կողմանե այդր ի Կ. Պ < ուլիս >: Կը հուսամ, որ ներողամիտ կ'ըլլաք այս հապաղման:

Ահա գրեթե երկու ամիս է, որ հոս եմ և հազիվ նոր սկսա քիչ մը գործելու: Տակավին վրաս տեսակ մը թուլություն և սեամաղձություն կա. կը պակսի այն գործելու՝ այսպես ըսեմ՝ եռանդը կամ Schaffensfreude, ինչպես կ'ըսեն դերմանացիք: Ըստ այսմ ձախորդ ճամբորդությունը օգուտ մը չըրավ նաև այս կողմանե, ինչպես բոլորովին ապարդյուն եղավ ուրիշ տեսակետներով ալ¹⁶: Զինչևիցե, հուսանք, որ ապագան ավելի լավ կ'ըլլա:

Կրկնելով մաղթանքներս ամանորա առթիվ՝ մնամ

Ձերդ

Հ. Հ. Տաշյան

Ինքնագիրը պահվում է՝ ԳԱԹ, Վ. Թորգոմյանի թղթոններ, № 1422:

6. ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄՅԱՆԻՆ

Վիեննա, 7 մարտ, 99

Մեծաբզո բարեկամ.

Ընդունելով Ձեր 19 հունվար գրությունն ու ներկակյալ հոգվածը՝ հանձնեցի վերջինս «Հանգիսի» խմբագրության: Հոգվածը ապրիլի թվույն մեջ լույս կը տեսնե¹⁷. մարտի թվույն մեջ մյուսը լույս տեսած է¹⁸, ինչպես կը տեսնեք նույն թվեն, որ թերևս նամակիս հետ հասնի Ձեր ձեռքը: Կը շնորհավորեմ, որ ասով ավելի ևս լույս սփռեցիք սակավածանոթ հայ բժշկական մատենագրի մը՝ Բուռնիաթի՝ վրա:

Ամիրտովյաթի մասին այն աննշան գրությունն, որուն մասին կը գրեք, թե կը բաղձալիք տեսնել, կը ցավիմ, որ պիտի չկարենամ զՁեզ գոհացրենել՝ գոնե առ այժմ: Փոքրիկ հոգված մըն էր, զոր զուր տեղ հարցուցի և փնտռեցի խմբագրին քով¹⁹, որ չի կրնար որոշ ըսել, թե արդյոք հեղինակի՞ն ետ դարձուցած է, կամ թե շփոթմամբ անպետ թղթերու մեջ ձգած: Այսպես կամ այնպես՝ չկրցա գտնել նույնը, որ խավրեմ: Ի դիպվածի որ գտնվի՝ կրնաք ապահով ըլլալ, որ կը խավրվի:

16 Տաշյանը 1898-ին կայցելել Կ. Պոլիս և Զմյուռնիա. իր մտադրությունն էր անցնել Կարին և անկե Կովկաս, բայց չի հաշտդիր իրեն ստանալ թրքական և ռուսական կառավարություններն թույլտվություն (սեանդես ամսօրյա, 1933, № 1, էջ 3): Մանրամասնությունները տես՝ նախորդ նամակում:

17 Խոսքը Վ. Թորգոմյանի «Հայ բժշկական ձեռագիրներ, ռուսա թղթեր» Ամիրտովյաթի, և Պոլսի թղթի Սերաստացի հոգվածի մասին է, լույս տեսած՝ «Հանդես ամսօրյա», 1899, № 4, էջ 108—112:

18 Այդ էլ Վ. Թորգոմյանի «Բժիշկ տոքթ. Հակոբ պեյ Հովհաննեսյան» կենսագրական ակնարկն է, տպագրված՝ «Հանդես ամսօրյա», 1899, № 3, էջ 80—82:

19 «Հանդես ամսօրյա» խմբագիրը 1899 թ. Վարդան Մելիքսեդեկյանն էր:

Հոգվածը կարողացած էր ժամանակին, Բոլորովին աննշան էր: Գտնելով բժշկարանին հիշատակարանը (կարծեմ, կիսատ ձեռագրով)՝ փութացած էր կարճ հոգված մը «թխել» ծանուցանելու, որ գյուտ մ'ըրած է՝ անծանոթ հայ բժիշկ մը երևան հանելով, կարծեմ հայ ըլլալուն վրա ալ մեծ խնդիր մ'ընելով: Հեղինակին ամենեկին ծանոթ չէր, ինչ որ գրված է Ամիրտովլաթա վրա: Այս ուճով բան մըն էր, որուն տրված պատասխանը շատ մեղմ ու սքանչելի էր «Հանգիսի» նամակատիին մեջ²⁰:

Մաղթելով Ձեզ առողջութիւն հանդերձ ընտանյոք և հաջողութիւն համեմայնի, և սպասելով նորանոր նպաստներու հօգուտ հայ գրականութեան՝ մնամ

Ձերդ

Հ. Հ. Տաշյան

Ինքնագիրը պահվում է՝ ԳԱԹ, Վ. Թարգոմյանի թղթեր, № 1423:

7. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ

Վիեննա, 18 ապրիլ, 1899

Մեծարգո բարեկամ.

Շնորհակալութեամբ ստացա Ձեր 9/21 փետրվար գրութիւնն, և շնորհակալ եմ այն խրատուն՝ ղոր տված էիք՝ Հնախոսական հանձնաժողովին դիմելու: Ձեր գրածին իմաստով նույն հասցեին գրեցի²¹, և պատասխան ալ ընդունեցա (3/15 մարտ, թիվ 304), կրնամ ըսել ժխտական, այսինքն՝ այն իմաստով, որ Կոմիսիոնն յուր իրավասութենէն դուրս կը նկատեի իմ խնդրքս, քանի որ իմ ուզածս է ուսումնական ճամրորդութիւն մը՝ էջմիածին ձեռագիրներ ուսումնասիրելու ևն, իսկ Կոմիսիոնի գործն է զուտ «հնախոսական պեղումներ արտոնել և անոնց վրա հսկել»: Ուստի խորհուրդ կուտար դիմել Արտաքին գործոց նախարարութեան: Ստորագրած է գահերեցն՝ ծերակուտի անդամ կոմս Ա. Բոբրինսկոյ: Խորհրդին հետեցա, և երեկ (ապր. 17) գրեցի Պետերբուրգ, Արտաքին գործոց նախարարութեան²², Արդյունքը տեսնինք ի՞նչ կ'ըլլա. բայց կասկած ունիմ, որ պիտի չհաջողի այս ալ: Զինչեւիցե:

Այսօր ընդունեցա երկու գրվածք, մին Աթոս լերան Ձեր ըրած այցելութեան և այն տեղվո վրական ձեռագրաց մասին²³: Կը գուշակեմ, որ այն իմաստով ըլլալու է, զոր բացատրած էիք ինձ ի Կ. Պոլիս²⁴: Մյուսը Բագրատ արքա-

²⁰ «Հանդես ամսօրյա», 1899, № 1, շաբթիկ, էջ Բ, նամակ՝ ուղղված Նիկողիա, ոմն Հ. Ասատուրյանի, որն և հեղինակն է Ամիրտովլաթին նվիրված թույլ հոգվածի, որ խմբագրութիւնն անհարմար է գտել տպագրել:

²¹ Տաշյանի 1899 թ. փետրվար-մարտյան նամակը դեռ չենք կարողացել ձեռք բերել:

²² Տաշյանի 1899 թ. ապրիլի 17-ի նամակը Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեանը, մեզ մատչելի չի եղել:

²³ Ն. Մառի «Из поездки на Афон» հաղորդման է վերաբերում խոսքը: Այն կարողացվել է ուսական կայսերական հնագիտական ընկերութեան արևելյան բաժանմունքի 1898 թ. դեկտեմբերի 17-ի նիստում և ապա տպագրվել Հանրային կրթութեան մինիստրութեան ամսագրում (ЖМНП), 1899, մարտ: Ուղեորութիւնը կատարվել է 1898 թ. ամառը: Այդ հոգվածի հայերեն թարգմանութիւնը մեզ հայտնի չէ:

²⁴ Որովհետև Տաշյանը Պոլսում է եղել 1898 թ. երկրորդ կեսին, հետևաբար Ն. Մառն ու նա հանդիպած պիտի լինեն նույն այդ ժամանակ:

յի անվամբ՝ չդիտեմ ի՞նչ է նյութը²⁰։ Վասն զի, դժբախտաբար, ուսուցիչները չավազանց քիչ ծանոթ էինձ, և կը ցավիմ, որ ցայժմ չկրցա քիչ մ'ավելի զբաղիլ անով, որ դոնե անսխալ և դյուրավ հասկընայի կարևորները։ Թեպետ հաստատ դիտավորությունս է այս, ինչպես ոչ նվազ վրացիների ուսումը, ցայժմ չկրցա զուրիս հանել։ Վրացիներն և ո՛չ բառ մը կը հասկընամ։ Կը խնդրեի, եթե Ձեզի մեծ դժվարություն մը չէ, համառոտիվ ծանուցանեիք ինձ ասոնց բովանդակությունը։ Վասն զի կ'ենթադրվի, «Հանդիսի» մեջ ծանուցանելու եմ երկուքն ալ։ Առաջնուն մասին կրնայի քիչ մը բան թերևս գրել, բայց երկրորդին՝ ոչինչ, չհասկընալով դրվածը։

Այս համառոտ տեղեկությունն զատ՝ կարծեմ առաջինը կ'արժե թարգմանությունամբ հրատարակել «Հանդիսի» մեջ, որ թերևս կարելի է հոգացվի, եթե առիթ ունենամ այստեղ կամ մոտերս ուսահայ ուսանող ևն գտնել, որ հանձն առնե թարգմանել։

Ողջունիվ այստեղվո ամեն ծանոթից կողմանե՝ մնամ

Ձերդ

Հ. Հ. Տաշյան

Ինքնագիրը պահվում է ՍՍՀՄ ԳԱ դիվանում (Լենինգրադ), Ն. Մառի թղթոսներում՝ հավաքածո 800, ցուցակ 3, № 1371ա, Թ. 3—4ա։

8. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Վիեննա, 24 հունիսի, 1900

Մեծապատիվ Ա. Չոպանյան.

Շատ ուշացուցի Ձեր վերջին պատվական գրության պատասխանը. բայց այլազգ անկարելի էր, ինչպես արդեն գուշակած էիք Ձեր թղթին մեջ։ Խնդիրը հոն է, որ առանց Գեր. աբբահոր հրամանի²⁶ կարելի չէ ինձի մասնակցիլ Համաժողովին²⁷, իսկ Գեր. աբբահայրը բոլորովին հիվանդ՝ անկարող էր և է ցայժմ տակավին որևէ գործքի, թեև ապաքինած է հիվանդությունն։ Այս էր պատճառը, որ հապաղեցի անմիջապես պատասխանելին, որ ժխտական պիտի ըլլար, ինչպես գոնե գործքով եղավ ալ։ Ի հարկե, ուրիշ դժվարին կեստ մ'ալ կար ինձի համար՝ հայոց հեթանոսական կրոնքին վրա բանախոսություն մ'ընել կամ խոսիլ դժվար էր ինձի, որ գործնական դյուրություն չունիմ գաղիներեն լեզուն վարժ խոսելու. իսկ գերմաներեն լեզուն Պարիսի մեջ հայազգվո մը կողմանե՝ կարծեմ անպատշաճ էր։ Զինչևիցէ՝ չեղավ։ Համենայն դեպս մեծապես

²⁵ Ն. Մառի «Из книги царевича Багарата о грузинских переводах духовных сочинений и героической повести „Дареджаниани“ աշխատության մասին է խոսքը։ Այն տպագրվել էր Կայսերական ակադեմիայի տեղեկագրում, հ. X, № 2, փետրվար, 1899 և ապա արտատպվել առանձին գրքուկով։

²⁶ Նկատի ունի նշանավոր հայագետ Արսեն Այտընյանին (1824—1902), որը 1886 թ. օգոստոսի 16-ից նաև Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր էր։

²⁷ Ձեռքի տակ չունենալով Չոպանյանի համապատասխան նամակը, կարծում եմ, որ Տաշյանը հրավիրվում էր Փարիզի միջազգային-ցուցահանդեսի ազգագրական համաժողովի կողմից՝ հայոց հեթանոսական կրոնի վերաբերյալ դասախոսություն կարդալու, որ, ցավոք, լի՝ հաջողվել։ Նույն համաժողովի առաջարկով 1900 թ. Չոպանյանը դասախոսություն կարդաց հայ ժողովրդական վեպի մասին։

շնորհակալ եմ Ձեզ, որ բարեհաճած էիք ինձի համար շատ պատվաբեր առաջարկություն մ'ընել Համաժողովին վարչության, և եթե առիթ կա կամ պետք տեսնիք՝ խնդրեմ բարեհաճիք հայտնել խորին շնորհակալությունս նաև անոր:

Բաղձանքս է գոնէ ցուցահանդեսին առթիվ Պարիս դալ և ՂԶեղ վերստին տեսնիլ, բայց չեմ գիտեր՝ աս ալ պիտի ըլլա՞ թե ո՛չ: Ըստ երևույթին արգելքներն որ շատ կան, բանալ կարելի պիտի չըլլա:

Ներեցեք, որ այժմ համառոտով կը փակեմ. ուրիշ առթիվ ավելի մանրամասն: Մաղթելով հաջողություն Ձեր գրական գործոց, հատկապես հաջողություն «Անահիտին», մնամ հարգանք

Ձերդ

Հ. Հ. Տաշյան

Ինքնագիրը պահվում է՝ ԳԱԹ, Ա. Չոպանյանի թողոններ, № 6904:

9. ԼԵՎՈՆ ՄՍԵՐՅԱՆՑԻՆ

Վիեննա, 24 հունիս, 1900

Մեծարգո Լեոն Մսերյանց.

Ընդունեցա Ձեր պատվական գրությունը և սակայն ցայսօր չկրցա որոշ բան մը գրելու, վասն զի բուն խնդիրը կատարելու՝ որուն ամեն կերպով պատրաստ եմք, այլևայլ դժվարություններ կային և կան:

Անշուշտ լավ էր Ձեր խորհուրդը, Հովնանյանի ուսումնասիրության հոլովների մասը օրինակել տալ Ձեզ համար: Բայց ահա դժվարությունը: Գրվածքը վերջնական չէ, ոչ ալ լիովին պարզագրված, շատը լուկ նյութ՝ բազմաթիվ թղթիկներու վրա: Ասով կարելի չեղավ աշակերտաց արտագրել տալ, առանց նախ ամբողջը ուսումնասիրելու և թերիները լրացնելով ամբողջացնելու, որ երկար աշխատասիրության գործ է: Վերջապես՝ խոսելով մյուս վարդապետաց հետ՝ առաջարկություն եղավ ամբողջ այն մասը՝ ինչպես այժմ է՝ խավրել Ձեզի: Բայց կետ մը կա հոն՝ որուն պարզվիլն անհրաժեշտ է: Որչափ մեզի ծանոթ է՝ Ռուսաստան մտած գրյանք ու գրվածք գրաֆնեռլյան կ'երթան: Բայց արդ այսպիսի ձեռագիր մ'որ մանր ու մեծ թղթիկներով է գրաքննության ենթարկել կարելի չէ. վասն զի նաև թղթիկի մը կարելի կորուստն անփոխարինելի է՝ հոս ուրիշ օրինակ մը չըլլալով: Այս վտանգին չենք կրնար ենթարկել գրվածքը, որ թեև յինքյան շատ անկազմ ու թերի է, համենայն դեպս պիտի գործածվի լրացնելու հանգուցյալ հեղինակին երկասիրության շարունակության պակասը: Թղթատարի տանելու և ետ բերելու վտանգը հուսանք մեծ չէ, բայց մյուսը՝ ահա՛ խնդիրը: Ուստի չենք գիտեր, ի՞նչ ընելու է: Եթե ապահով միջոց մը գիտեք՝ խնդրեմ հայտնեիք:

Զգիտեմ որ Ձեր նպատակին օգտակար պիտի ըլլա՞ն այս նյութերը, որ ուրիշ ուղղությամբ հավաքված են և միայն որոշ չափով մը, այսինքն՝ միջին-հայերենի տարբերությունը միայն հին-հայերենն կամ դրաբարեն աչքի առջև ունենալով. հին ու նոր բարբառները ծրագրերն դուրս են: Սակայն հայսմ Դուք կրնաք դատաստան ընել²⁸, — Ի գիտություն ավելցրեմ, որ այս նկատմամբ

²⁸ Ղեոնց Հովնանյանի (1817—1897) «Հետազոտությունք նախնայաց ուսմանի վրա» առաջին մասի երկու տետրերից (Վիեննա, 1897), որ նվիրված էին միջին հայերենի ծագման ու զարգացման քննությանը, Լ. Մսերյանցը մեծապես օգտվել է Մոսկվայում 1901 թ. լույս ըն-

շատ հարդի գործ մը մամլո ներքև է, մաս մ'արդեն հրատարակված, որ ճիշտ այն ծրագրով է՝ բայց ասկե շատ ավելի ընդարձակ. այսինքն՝ Յ. Կարստի «Քերականություն Կիլիկյան հայերենի»։ Այժմ հրատարակված է մաս մը, որ է՝ J. Karst, Aussprache und Vocalismus des Kilikisch-Armenischen, Strassburg, 1899. 8^o, pp. 74, որուն մասին դրեցի՝ «Հանդես», 1900, էջ 17—20²³, և զոր «Բազմավեպ» սկսած է թարգմանարար հրատարակել։ Բուն գործը, որուն համար հեղինակը հոս մեր քով շատ առատ նյութ հավաքեց, տակավին ընդ մամլով է։

Կրկին կը խնդրեմ, եթե ապահով կերպ մը գիտեք, իմացընեք. կարևոր բանն է, որ թղթերը բոլորովին ապահով Ձեզի հասնին և կրկին մեզի վերադառնան անվտանգ և անկորուստ։

Մնամ հարգանք

Ձերդ

Հ. Հ. Տաշյան

<Մրաի վրա>

Monsieur M. Levon Mseriantz, Privat-Dozent a l'Université Imperiale a Moscou, Menchikowa Bachnia, Maison Milowanoff (Russie).

Ինքնագիրը պահվում է՝ ԳԱԲ, Լ. Մսերյանցի թղթեր, № 524:

10. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

Վիեննա, 16 մարտ, 1901

Մեծապատիվ պ. Ա. Չոպանյան.

Ձեր փետրվար 8 թվականով պատվականը ընդունած եմ։ Ազդը հանձնեցի «Հանդիսի» խմբագրապետին³⁰, որ կը կատարե Ձեր բաղձանքը։ Այս առթիվ կը հայտնեմ շնորհակալությունս «Անահիտի» թվերուն համար, զորոնք հաճեցաք խավրել ինձի, և մաղթել Ձեզի հաջողություն ձեռնարկած լավ գործին մեջ։

Առողջությունս և գործերը կը հարցընեք։ Առողջությունս, փառք Աստուծո, լավ է, գոնե ոչինչ տարբեր անկե, զոր գիտեք։ Նույն է նաև ընդհանուր կացությունը և գործերը, որ Ձեզի անձանոթ չեն։ Եթե փոփոխություն մը կա՝ ան ալ աչքերուս վիճակն է, որ հետ զհետե տկարանալու վրա են։ չգիտեմ հոգնությամբ հետևանք թե ի՞նչ։ Բայց վերջապես հեռատես ըլլալը—որմե այժմ շատ ու շատ

ծայած իր „Этуды по армянской диалектологии“ (մասն Բ, պրակ Ա) աշխատության մեջ, որի մի մեծ բաժինը հենց գրաբարի ու միջին հայերենի հոլովման համակարգերի բաղադրական ուսումնասիրությանն է վերաբերում։ Հոլովանյանի աշխատության երկրորդ մասի՝ միջին հայերենի քերականության (անավարտ ձևագիր) համապատասխան էջերը, ինչպես կարելի է ենթադրել, Լ. Մսերյանցին չեն ուղարկվել, այլպես դժվար թե նա որևէ առիթով չհիշեր դրանք կամ մեջ չբերեր իր գրքում, ինչպես նման դեպքերում բարեխղճորեն անում է։

²⁹ Նկատի ունի «Կիլիկյան հայերենը հոլոված-մատենախոսությունը (սեփարդական համայնություն, 1900, № 1)։

³⁰ Այսինքն՝ Վարդան Մելիքիսեդեկյանին, որ խմբագրապետ էր 1898—1901 թթ. (սեպտեմբեր)։ Իսկ «Ազդը» «Անահիտի» երրորդ տարվա բաժանորդագրությունն սկսվելու վերաբերյալ հայտարարությունն էր, որ տպագրվել է՝ «Հանդես ամսօրյա», 1901, № 5—6, չապիկի վրա, վերջից բ էջ, № 8 չապիկի վրա, սկզբից բ էջ (նույնը տե՛ս նաև № 9)։

հետի հմ արդեն—լավ բան է. բայց ի՞նչ ընենք, երբ չկա այլ ևս: Գոհ եմ, եթե ավելի և շատ ավելի չգեշնա:

Նոր գործք՝ բացի «Հանդիս» (—որ դանդաղ կ'ընթանա դժբախտաբար) է հ. Սպենյանի Հայկաբանությունը կամ հայոց լեզվի ուսումը, որ մամլո տակ է, և զոր կը ջանամ լրացնել՝ ինչպես ըրի Գաթրճյանի «Պատարագամատուցքը» (նույն ալ դրով և դիրքով): Քիչ մը դժվար է անոր համար, որ լեզվագիտական է և ավելի մասնագետ լեզվագետ մը պետք էր գործին համար: Սակայն կը ջանամ ընել որչափ կրնամ: Չեմ գիտեր ե՞րբ կրնա գոնե Ա մասն հրատարակվի: Անոր համար կը խնդրեմ, որ առ այժմ մեջտեղ չ'էլնե, վասն զի գործը կրնա շատ ուշանալ:

Ներքինք որ այս անգամ այսչափ քիչ կրնամ գրել: Ուրիշ անգամ հուսամ ավելի պարապ ունենալ ու ավելի գրելիք: Մնամ մեծարանոք

Ձերդ

Հ. Հ. Տաշյան

Ինքնագիրը պահվում է՝ ԳԱԹ, Ա. Զոպանյանի թղթեր, № 6905:

11. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻՆ

Վիեննա, 16 մայիս, 1901

Մեծաբզո բարեկամ.

Ձեր վերջին՝ 24 ապրիլ<ի> բարեկամականին այսօր միայն կրնամ պատասխանել, ուրիշ գործով չափազանց ծանրաբեռնված ըլլալով: Նյութական մասը դյուրին է կարգադրել: Սանասարյան վարժարանի ցուցակը³¹ կը խավրվի, իսկ Պալյանի ցուցակներու³² մասին խնդրեցի Վ<երապատվելի> հայր Բառնարասեն³³, որ ասանկ բաներու մեջ աջողակ է և արդեն գործ ունի շատերուն հետ, և սիրով հանձն առավ: Ուստի ապահովապես կը գտնե գրքերը և կը խավրե: Մեծ բաներ չեն, քանի մը տետրակներ՝ մանրագիր ցուցակներ մասնական փոքր հավաքմանց մեկ քանիին:

Ծանրակշիռ է Երուսաղեմի Ավետարանին խնդիրը³⁴: Ձեզի կարծակից եմ, որ հնության վրա կասկածելու նպաստող նշաններ կան: Թղթահամարներն վե-

31 Զ. Աճառյանի թուղթի հայերեն ձեռագրաց մատենադարանին Սանասարյան վարժարանի ի կարիքն աշխատության մասին է խոսքը (Վիեննա, 1900):

32 Տրդատ վարդ. Պալյանը առանձին գրքուկներով հրատարակել էր թուղթի հայերեն ձեռագրաց Սուրբ Սարգիս վանուց ի Կեսարիա» (Կ. Պոլիս, 1892), թուղթի հայերեն ձեռագրաց Սուրբ Աստվածածնա եկեղեցվոյն Կեսարիո և Սուրբ Գևորգ եկեղեցվոյն Գըրջեհրի» (Կ. Պոլիս, 1893) և թուղթի հայերեն ձեռագրաց Ս. Սիոն և Ս. Լուսավորիչ եկեղեցյաց ի Մաղնիսիա» (Զմյուռնիա, 1887):

33 Բառնարաս Պիլնզիկեյան:

34 Երուսաղեմի Ավետարանի (այժմյան № 2555) գրության ժամանակին Տաշյանն անդրադարձել էր «Հանդես ամսօրյայի» 1900 թ. դեկտեմբերյան համարում (թիվն էր ձեռագրերի Ավետարանը Լազարյան ճեմարանի, Երուսաղեմի և Շխնոցի», էջ 353—357): Հենվելով նույն տարվա հայ լրագրերում երևացած լուրերի վրա, շնայած կասկածանքով, բայց ծանուցում էր, որ Երուսաղեմի Ավետարանը գրված է 602 թ.: 1901 թ. փետրվարին «Հանդես ամսօրյան» տպագրեց (էջ 33—35) այդ ավետարանի նկարագրությունը, որ կազմել էր Ս. Ե. Խ-ն (—Սահակ Եպս. Խաչատրյան): Մեջբերված գույգ հիշատակարանները նույնն էին հաստատում: Ձեռագրի գրության ժամանակի մասին վերջնական խոսք ասաց նշանավոր արվեստաբան-հայագետ Գաբրիել Հովսեփյանը, որի կարծիքով՝ այն տասներորդ դարի վերջերի գործ է, իսկ հիշատակարանները՝ «նորագույն ժամանակներում կատարված կեղծիք» (Գաբրիել Խ. Կաթողիկոս, Հիշատակարանը ձեռագրաց, Ա. Անթիլիաս, 1951, էջ 170):

յիւն լուսանցքի վրա գունավոր շրջանակի մեջ նշանակելը սովորական չէ, անշուշտ: Սակայն ասի կրնա երկրորդական ըլլալ, քանի որ ուրիշ գրչագրաց ալ սովորութիւն է թվանշաններն նշանակել գունավոր՝ բուն միագույն՝ շրջանակի մեջ նույնպէս (ավետարանաց բաժանմունքն կողի լուսանցքներուն վրա են): Ավելի կասկածելի է մագաղաթին մաքուր և անարատ մնալը, կամ՝ ինչպէս կը վկայէ՝ «քիչ տեղ դեղնած»: Այսուհանդերձ որոշիչ պարագա կրնա ըլլալ այս միայն այն դեպքին, երբ ձեռագրին պատմութիւնը գիտնանք (— որ ինձի անծանոթ է.—) խաղաղ վանքի մը մեջ խնամով և անվտանգ պահպանով՝ կրնար անշուշտ մաքուր մնալ դարերով: Մանավանդ որ դարերու դրոշմն այս ալ կրած է, գոնե կ'ըսվի թե «ստորին լուսանցքներն մաշած են», շատ տեղ թղթեր ինկած են ևն:

Շատ ավելի ծանրակշիռ է բնագրի խնդիրը, այն՝ որ բնագիրն ավելի սովորականին կամ տպվածին համեմատ է: Այս կետը միայն մանրամասն ուսումնասիրութեամբ կրնա վճռվի: Վասն զի նախ հարկ է ցուցնել, թե ո՞րչափ հնութիւն ունի սովորականը: Դժվարութիւնն այն է, որ «սովորական» կոչածնիս ալ ապահով բնագիր չէ, այսինքն՝ տպագիրը քննադատյալ չէ: Առանց այս կետը վճռելու՝ դժվար է ըսել, թե ինչու կարելի պիտի չըլլա, որ սովորական բնագրին հատուկ *typus*-ը գտնվեր նաև է գարուն սկիզբը: Միայն Մատթ. Իէ համեմատելով կը գտնեմ, որ Երուսաղեմ = Տպ. համար 3, 25, 29, 48, 60. — իսկ Մոսկ. — Տպ. համ. 9, բայց Մոսկ. = մյուս Ձագր. սովորականին (տե՛ս Ձոհ-րապ)՝ համ. 29, 54, 56, — փոխադարձաբար Երուսաղեմ = մյուս Ձագր, սովորականին՝ համ. 54, ո՛չ միայն համեմատ համ. 46: Ուղղագրութեան կետերը (ոմանք = ովմանք) չհաշվեցի, քանի որ սա ընդհանուր խնդիր մըն է, տակավին քննութեան կարոտ, ուստի առանց մանրամասնութեանց և քննութեանց վճիռ մը տալ չեմ համարձակիր:

Խնդիր չկա՝ հիշատակարանն օտար ձեռք է, և անշուշտ ո՛չ գրչեն, ուստի այն «Գրիգոր Երէց» թերևս լոկ լուսանցագիր մըն էր՝ ստացիչը: Անշուշտ, անսովոր է և ձեռք, «Հայոց թուական ՄԱ. : . ԶԺԲ», կը խոստովանիմ, որ առաջին տպավորութիւնս սա՛ եղավ, թե մի՛ գուցե ՄԱ = ԶԺԲ (այսինքն՝ ՈԲ) ըլլա՛ւ երկուքն ալ Հայոց թվական, մին փոքր թվականը (Սարկավագինը), մյուսը՝ մեծ կամ բուն Հայոց թվական: Բայց թվերը չեն համապատասխանիր: ՄԱ եթե «փոքր» թվական է և = ՈԲ, իբր քսան տարի տարբերութիւն կը ցուցնեն, այսինքն՝ ՄԱ = 1135 (Սրկ. 1084 + 51), իսկ ԶԺԲ = 1153: Ժիշտ նոր թվականին հաստատման սկիզբն այսպիսի սխալ մը դժվարին է ընդունել: «ՄԱ» ապահով կ'երևա. գոնե կ'ըսվի թե (թողլով նաև թղ. 7ա խնդրո ներքին եղողը) կա նաև թղ. 91ա «թուին Հայոց ՄԱ» ևն: Ավելի ծանրակշիռութիւն կը դնեմ սա՛ կետին վրա, որ ամեն տեղ հիշվածը համեմատ է պատմութեան, այսինքն՝ «գրեցաւ յԱձի յաւուրս Մուշեղի»: ավելի որոշ՝ 91ա «Թուին Հայոց ՄԱ յաւուրս Մուշեղայ տեառն Տարոնայ յՈձ քաղաքս»: Այս Օձ և Մուշեղ ճիշտ կը հարմարին Քրիստոսի 602 թվականին (տե՛ս և Չամչյան, Բ, 311, 606 և այլուր): Այս կետն աննշան չէ. ուշ ժամանակի կարկատող մը գրեթե անկարելի էր, որ ճիշտ այս Օձ քաղաքն և Մուշեղն ընտրեր: Որչափ գիտեմ՝ այս Օձ շատ քիչ կը հիշվի Հովհ. Մամիկոնյանէն ետքը: Վ < Երապատվելի > Հայր Ղ. Ալիշան «Օձ բերդը», որ Թ գարուն կը հիշվի, նույնացնել կ'երևա Տարոն Օձ քաղաքին հետ (տե՛ս Վարդան, տպ. Վենետիկ, 1862, էջ 79, «թուի»), բայց ինձի անհավանական կ'երևա, ինչպէս տարբեր է Օձ ձորն՝ ուր շինվեցավ Գաղկակերտը (Թովմ. Արծր., տպ. Պտրբ,

1887, էջ 256)։ Առ հասարակ կարեւոր է քննել այս ֆաղափին պատմությունը, որուն ավերածը շատ հին կ'ըսվի. (Հ. Ներս. Սարգիսյան, Տեղագրութիւն ևն, Վեներտ., 1864, էջ 226)։ Եթե ավերման ճիշտ թվականը գտնվի, կունենանք լուսանցագրություն ժամանակի համար կարեւոր կովան մը։ Այս կետը քննած չեմ։

Հստ այսմ՝ թեև անսովոր՝ կ'երևա թե ստուգիվ «ՄԱ» Հայոց թվականն է, և ԶԺԲ (=602) փրկչական։ Վերջինս նշանակել անսովոր ալ ըլլալով՝ անհնար չէ։ Հայոց անծանոթ չէին Զատկական շրջանի կանոններն, որ հաճախ Քրիստոսի թվականք ալ կը նշանակվին, և ճիշտ Հայոց թվականը գնելու ատեն խնդիր էր նաև Քրիստոսի ծննդյան թվականը ճշգրտել (այս մասին տե՛ս Dulaurier, Recherches etc, p. 1 ff, 37 ff ևն)։ Կը խոստովանիմ, որ այս կետերը և, մանավանդ, Օձի և Մուշեղի հիշատակությունը կասկածս նվազցուց, և այսպես վճռել չեմ կրնար, եթե ձեռագիրն ավելի չճանչցվի և մանրամասն չքննվի։ Հնագրական տեսակետով, գոնե, բավական էջ լուսանկարով պետք է ունենալ, որ կարելի ըլլա վճիռ մը տալ։

Մյուս ձեռագիրն, ուր իբր թե «Լուսավորչի» թվականն հիշված ըլլա, Կ. Պուսո Օրթաքոյ տեղով Անտոնյան հայոց Ավետարանն է, գոր «Թարգմանչագիր» կը կոչեն, վասն զի իբր թե 415-են է։ Հիշատակարանն (նոր ձեռքն նորոգված ճիշտ թվականին մասն՝ ինչպես անձամբ տեսնելով ստուգեցի)՝ «Գրեցաւ սուրբ Աւետարանն ՆժԵ Թուականութեանս Տեառն մերոյ, հրամանով և ծախիւք» ևն. դարձալ՝ «Ես Սարգիս անարժան քահանայ գրեցի զսուրբ Աւետարանն ՆժԵ Թուականին Թագաւորելոյ ի վերայ մեր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» ևն։ Ահա այս թվականն (—զուտ եթե բառացի՝ փրկչական՝ առնունք, կ'ըլլա=415) կը մեկնեն Բանասեր մը իբրև Լուսավորչի թվական, ուստի $300 + 415 = 715$ (գրվածքն է ի «Բազմավեպ», 1897, էջ 497—99)։ Այս խնդրո մասին ընդարձակ խոսած եմ և հիշատակարանը դրած եմ «Ակնարկ մը հայ հնագրության վրա» գործին մեջ (Վիեննա, 1898, էջ 181—188)։ Իմ կարծիքս էր, թե ՆժԵ լոկ Հայոց թվական կարծելու է (=966)։ Հետո երբ անձամբ տեսա հիշատակարանն ու ձեռագիրը՝ կարծիքս փոխելու նոր բան մը չգտա։ «Լուսավորչի» կարծել լոկ ենթադրական բան մըն է և կովան մը չունի։ Կը մնա՝ կամ բառացի առնելու է ՆժԵ, «Տեառն մերոյ» (=415), կամ Հայոց թվականն է. (— և անհնար չէ՝ անկե հաշվել «Թագաւորելոյ Յիսուսի» թվական մը, կամ լոկ այնպես անվանել Հայոց թվականը՝ զուտ եկեղեցական ըլլալը շեշտելով)։— Բայց այս խնդիրները շատ հեռուն կը տանին զմեզ, և ո՛չ ալ զԶեզ ձանձրացընել կրնամ երկար նամակովս։

Կը սպասեմ «Մնացորդաց» գրոց մասին Ձեր գրածին³⁵։ Իմ քննությունս, դժբախտաբար, մնաց տակավին այնպես անավարտ³⁶։ Տարվույս սկզբեն վեր

³⁵ «Շանդես ամսօրյայի» 1901 թ. հուլիսյան համարում (էջ 193—195) լույս տեսավ հալթյանցի մի նամակը (Մոսկվա, 1901, մայիսի 12), որով տեղեկություններ էին հաղորդվում Լոնդոնի Համբերթյան մատենադարանում պահվող մի գրչագրի մասին, որը պարունակում էր «Մնացորդաց դիրքը» հետաքրքրական տարբերակներով, երևի հալթյանցը դիտավորություն ուներ նույն խնդրին հանգամանորեն անդադրադադարով, և խոսքը այդ մասին է։

³⁶ «Մնացորդաց գրքի» հատարակությանը նվիրված համառոտ մատենախոսականում («Շանդես ամսօրյա», 1900, № 1, էջ 23—24) Տաշյանը հայտնում էր. «Մեր գրականության հնագույն շրջանին պատմության համար այս կարևոր հատարակության մասին պիտի խոսինք առանձին», բայց, որքան գիտենք, նման հոգված նա չկարողացավ հատարակել։

ոչինչ կրնամ սկսել, ո՛չ ալ շարունակել սկսածները: Նոր զործ մը, զոր սկսելուս կես մը կը զղշամ (—վասն զի շատ հոգնեցուց զիս և հակառակ ամեն ջանքի կրիայի քայլերով հառաջ կ'երթա),— բոլորովին բռնած է ժամանակս, և ջանալու եմ, որ սեպտեմբեր <եմբեր> ամսուն լույս տեսնե գոնե Ա մասը: Հայոց լեզվի և Հայկաբանության մասին ընդարձակ գրություն մըն է, հանգուցյալ Հ. Քերով-բեի Սպենյան³⁷, զոր հարկ էր ճոխացրենել ամեն կերպով, մանավանդ հայ լեզվի հեղուկը կամ նախամեսոպոպյան ժամանակաց խնդիրներով: Ես դեռ այս մասին վրա կ'աշխատիմ: Ամբողջը՝ երկու մաս է՝ Գաթրճյանի «Պատարագամատուցեն» շատ ավելի մեծ է, կը կարծեմ՝ գրեթե կրկինն, եթե այս ընթացքով շարունակվի, բայց պիտի ջանամ եսոմեսոպոպյան ժամանակները կարճ կապել: Այս մասին թերևս հետո ուրիշ անգամ:

Այս առթիվ պարտքս է հայտնել շնորհակալությունս այն բարյացակամության համար, որով հաճած էիք խավրել «Հին Հայաստանի մի քանի աշխարհագրական անունները և վանա արձանագրությունները» գործը: Եթե կրնամ համարձակիլ՝ կը խնդրեի, որ համառոտիվ նշանակեիք էական կետերն և արդյունքն³⁸, ճիշտ հիմա Ուրարտյանց և Հայոց խնդիրը կը գրեմ հիշյալ գործոյն մեջ և կբաղձայի լուկ հիշելեն ավելի բան մը գրել կարենալ Ձեր գրվածին մասին: Իսկ ժամանակի սղությունը կ'արգիլե, որ բառարանով սկսիմ աշխատիլ լավ հասկընալու ուսերենը: Իհարկե, եթե ձեզի նեղություն մը կամ գործոց պարապ արգելք մը չէ խնդրածս:

Ողջունիվ ամենուն, որ հոս են՝ մնամ հարգանք

Ձերդ

Հ. Հ. Տաշյան

Ինքնագիրը պահվում է՝ ԳԱԹ, Գ. Խալաթյանցի թղթեր, № 770:

12. ԼԵՎՈՆ ՄՍԵՐՅԱՆՑԻՆ

Վիեննա, 16 մարտ, 1902

Մեծաբազմ բառեկամ, պր. Լ. Մսերյանց:

Ընդունեցա Ձեր 24/փետր. թվագրյալ պատվական գրությունը, և շնորհակալ եմ պարունակած տեղեկությանց համար: Ընդունեցա դարձյալ Բարբառախոսության անգլիերեն քաղվածքը³⁹, զոր օգտիվ պիտի գործածեմ աշխատա-

37 Ք. Սպենյանը (ծն. Կ. Պոլիս, 1817 մարտի 13—վախճ. Վիեննա, 1886 դեկտեմբերի 6) Մխիթարյան անվանի բանասեր և հայկաբան էր, դասական հայերենի քաջ դիտակ ու հետազոտող, միայն թե հանգամանքների բերումով ավելի դպրոցական մարզում է գործել: Նրա կոթողային աշխատությունը՝ «Ուսումն հայերէն դասական լեզուի», մնացել էր վերջնական խմբագրման կարոտ ու անտիպ: Տաշյանը, ճիշտ է, սկսեց վերանայել, լրացնել ու հրատարակել, բայց իր հիմնական մասով, ճակատագրի բերումով, Սպենյանի գործը նորից մնաց անտիպ: Մանրամասնություններն ստորև, նամակ 12, ծան. 40:

38 Խալաթյանցի «О некоторых географических названиях древней Армении в связи с данными Ванских надписей» հոդվածը տպագրվել էր 1901 թ. «Древности восточные» հանդեսում: Հայերեն թարգմանությունը լույս տեսավ Կ. Բասմաշյանի «Բանասերում» (Փարիզ):

39 Լ. Մսերյանցը «Armenian dialectology» ուսերենից անգլիերեն թարգմանված հոդվածի մասին է խոսքը, որ լույս է տեսել Ամերիկյան բանասիրական ընկերության նոթերի 5-րդ գրքի 32-րդ տետրակում («Proceedings of American Philological Association», 1901, էջ 127—129):

սիրությունս մեջ՝ հարմար տեղում Բուն խնդիրը՝ ա՛յն կարծիքը, զոր ունիմ թե Վանա լեզուն կապ ունի Հայերենի հետ, լավ էր երկար բացատրել կարենալու Բայց, դժբախտաբար, այժմ չեմ կարող, քանի որ ա՛յնպես զբաղված եմ Ձեզի ծանոթ գործը լմնցրնելու, որ կ'երկարի չափեն ավելի և չի ավարտիր տակավին⁴⁰։

Ծիշտ Ձեր դրածին նման գրած եմ ես ալ, և կարծեմ չափեն ավելի ընդարձակ՝ հիշյալ գործին մեջ սա բաժիններով՝ Վանյան արձանագրությունը, Մեկնությունը ու Դպրություն (բոլոր նշանագրերով ևն), Ազգակցության խնդիրներ (Սեյս ևն և վրացերեն՝ զոր կը մերժեմ, Ենսեն և Միտաններեն, Կոնդեր և երանյանք ևն) և դարձյալ (երկար քննություն մը) նոր մեկնություն Սանդախյանի (վաներեն և հայերեն)։ Ի վերջո՝ Պատմություն, կրոնք և աշխարհագրություն Ուրարտյանց։ Այս ամենուն մեջ ես լուկ տեղեկատվի և քննադատի դիրք բռնած եմ, բայց և այնպես տեղ-տեղ սեպհական կարծիքներ հայտնել ստիպված ըլլալով։ Այս մասը թերևս Ձեզի կրնա ծառայել Ձեր նպատակին համար։ Միայն թե այս ամենն միայն 1 թերթ տպված է, մնացյալը (3—4 թերթ՝ թերևս ավելի) նոր կը շարվի, և բավական պիտի տեև՝ մինչև ավարտի։ Բեռնած և նոր ձեռք բերել պետք եղավ, և աս երկար տևեց։ Երբ տպվին թերթերը՝ օրինակ մը կը խավրեմ։

Կարծիքներն ու մանք այնտեղ կը գտնեք։ Ունիմ ուրիշներ ալ, բայց չեմ գրած, վասնզի տակավին քննության կարոտ են, որուն համար լայն ժամանակ պետք է, զոր չունիմ այժմ, և դարձյալ սպասելու է լեմանա լավագույն հրատարակությանց (բնագիրներու)։ Օրինակի համար, կասկած ունիմ, թե նույնիսկ ընթերցվածը շատ տեղ բարեփոխելու է։ Կամ օրինակ, կ'ընդունվի թե Ուրարտյանց նշանաձևերը polyphone չեն Ասորեստանյայց պես, բայց եթե քննենք խստիվ՝ թերևս հավանականագույն է, բայց ո՛չ այնպես անժխտելի, և անթիվ նմաններ։ Առհասարակ ինչե՞ն է, որ Վանյան նշաններու բավական մաս մը՝ երբեմն բոլորովին տարբեր ձևով է կամ գոնե եղանակավորությամբ, քան նիւնվեինը, ևն, ևն։ Ասոնք և ուրիշներ հիմնական խնդիրներ են՝ որոնք արժանի են ուսումնասիրության։ Եթե Աստվածը հաջողե, և աչքերս ալ ներեն՝ հույս ունիմ օր մը պարապելու այս խնդիրներով։ Այժմ ոչինչ կրնամ ընել։

Մոսկվայի Հնագ<իտական> Մասնաժողովի աշխատություններն ունինք միայն (Древн. Востока)⁴¹ том первый, выпуск III այն ալ վերջին մասը միայն՝ стр. 281—483 (նիկոլսկի են)։ Ունինք դարձյալ նիկոլսկիի մեծ գրվածքը՝ Материалы <по> археологии Кавказа etc, вып. V, Моск., 1896, 4⁰, pp. 133⁴², ուրիշ հատոր չկա Մատենադարանիս մեջ։ Առհասարակ շունինք Մասնաժողովի հրատարակությունքն։

40 «Ուսումն դասական հայերէն լեզուի» աշխատությունը Տաշյանն այնպես էլ չկարողացավ մինչև վերջ մշակել, լրացնել ու հրատարակել, թեպետ ամբողջ մի ութնամյակ՝ 1900—1908 թթ., զբաղվեց նրանով։ Հրատարակեց միայն առաջին հատորի «Առաջին դպրութիւնը», «Անգիր ժամանակք» ենթավերնագրով (լույս տեսավ 1920 թ.)։ Նրա թողոններում մնում են շարունակության ինչ-ինչ պատրաստի գլուխներ, որ Վիեննայի Միթիթարյան միաբանությունը վաղուց ցանկանում է լույս աշխարհ հանել։

41 Այսինքն՝ «Древности восточные».

42 Այս հատորում լույս է տեսել ռուս արևելագետ Մ. Վ. Նիկոլսկու «Клинообразные надписи Закавказья» աշխատությունը։

կը հուսամ, որ ներողամիտ կ'ըլլաք դրածիս, և կը հուսամ, թե շատ-շատ
երկու-երեք շաբաթեն կրնամ խավրել թերթերը: Մնամ ամենայն հարգանք

Զերդ

Հ. Հ. Տաշյան

<Մտաւի վրա>

Monsieur M. Dr. LÉVON MSÉRIANTZ, Privat-Docent a l'Université Impériale a
Moscou (Russie). Menchikowa Bachnia, Maison Milowanoff.

Ինքնագիրը ստացվում է՝ ԳԱԹ, Լ. Մսերյանցի թողոններ, № 825:

13. ՅՈՋԵՓ ԿԱՐՍՏԻՆ

<26—29 հունիս, 1931, Բաղ-Հալլ>

... Իմ դիտողութենես ի մասին «Վիրք» անվան՝ չի հետևիր, թե ես Հայերը
Փոյուզացի կը նկատեմ: Հունական այս ավանդության դեմ որոշ գրած եմ ար-
դեն գործույս մեջ՝ «Ուսումն դասական հայերէնի», դր. «Լեզու Փոյուզացուց»:

Հայ ազգը կազմած են այլ և այլ տոհմեր: Ասոնց մին կամ մյուսը կրնա
արեւմուտքէ եկած ըլլալ, ժամանակ մը Փոյուզիա բնակած ու անցած Փոքր ու
Մեծ Հայք: Բայց անհավանական կը գտնեմ այն կարծիքը, թե ամբողջ հայ
ժողովուրդը Փոքր Հայք բնակած ըլլայ և Մեծ Հայք անցած կամ ստիպված անց-
նելու՝ Գամրաց (Կիմմերացվոց) արշավանքին հետևությամբ: Արդ՝ Գամրաց
արշավն եղած է՝ անցնելով Կավկասն ու արեւելյան Հայաստան՝ դեպ ի Իրան:
Հետո միայն Իրանէ անցած են կենդրոնական և հարավային Հայաստանի վրա-
յեն դեպ ի Փոքր Հայք ու Գամիրք (Կապադովկիա): Որովհետեւ արշավն եղած
է արեւելքէ դեպի արեւմուտք, անկարելի է, որ հայ ժողովուրդը մղվեր արեւմու-
տքէ դեպի արեւելք: Հայք թե ի Փոքր և թե ի Մեծ Հայք կը նստին անշուշտ՝ ինչ-
պես Գամրաց արշավեն ետքը՝ նույնպես ապահովապես անկե հառաջ: Բայց
կարելի է, որ Հայոց այն մասն՝ որ Հալիսի արեւելքը կը բնակեն, մղված ըլլալ
անով դեպի արեւմուտքն Հալիսի, ի Փոյուզիա, ուր ժամանակավ ձուլվեցան: Ուս-
տի կարելի է, որ հույն ավանդությունն նաեւ (այսպիսի) իրական հիմ մ'ունենա:

Հայոց գլխավոր զանգվածը՝ Հայք կը նստեն զ'միայն ի Փոքր Հայք
(ցորչափ ասի Հաթրաց Վերին Աշխարհի» չէր վերաբերեր), այլ նաեւ Մեծ Հա-
յոց լեռնաշխարհի մեջ, գոնե արեւմտյան Հայաստան, զ'միայն Գամրաց ար-
շավն հառաջ, զ'միայն հառաջ քան Ուրարտյան տիրապետությունը, այլ նաեւ
հառաջ քան առ հասարակ Թրակյան-Փոյուզական գաղթականությունը դեպ
ի Փոքր Ասիա: Հաթրաց բեռնագիր բնագրաց համեմատ Հայաշայի ժողովուրդն
արդեն այնչափ հզոր էր, որ Հաթրի առաջին մեծ արքայն ստիպված էր դաշինք
կռել Հայաշայի Հուկկանաշ արքայի հետ, որպես զի ազատ ձեռք ունենա Միտան-
նիի դեմ: Այս դաշինքը (ԺԱ դար ն. Ք.) Բողազքեոյի դիվանին ժանոթ ամենա-
հին դաշինքն է (Hukkanaš հակառակ անվան նմանության՝ անշուշտ չէ հայ
զրուցաց «Հայկ» նահապետը. ինչպես որ Ուրարտյան Արամե արքայն նույն
զրուցին մեջ իբր Արամ կ'երեւա): Հայաշա անվան ձեւն մէջ - (a) sa ավարտ
մըն է, որ կա ուրիշ անվանց մեջ ալ: Ուստի հայ արդեն ԺԵ գարուն կը նստեր
ի Հայաստան: Հայ անունն՝ ինչպես Դուք ալ կ'ընդունիք, լավագոյն կը մեկնվի
Hatti- է: Արդյոք հին Hatti-ի մեկ մասը արեւմտյան Հայաստանն անցած էր,
երբ նեշաշի թագավորը, ուստի հնդիկեվրոպական Հաթր՝ գրավեցին այն մայ-
րաքաղաքը (Ի դար ն. Ք.): Կարելի է. բայց ապացույց չունինք: Բայց աստի չեմ

հավատար, թե նախահաթեր այնպես ապահով «ոչ-եվրոպական» ըլլան։ Քանի մը ընդհատ (Glasse) մեկնությունը բավական չէ. և առ հասարակ այս խնդիրը նորեն քննելի է։ Նաև Միտաններեն այնպես ապահով «Կավկասեան» չէ. շատ դյուրութեամբ կարելի է, որ ի վերջոյ այս լեզուն իբրև հնդիկեվրոպական ցուցվի. ա՛յս է իմ տպավորությունս այս լեզվի մասին։ Համեմայն դեպս Հայաշայի ժողովուրդն արևմուտքեն եկած էր. Հայթյան բնադիրք կը ցուցնեն, թե ընդհանրապես Հայաշա կը ճգնի արևելքե դեպի արևմուտք դիմելու, արշավանքներ կ'ընեն դեպի «Վերին Աշխարհ», ուստի՝ Կապադովկիա։ Ինչպես Շուվե (հայ.՝ Մոփք), ինչպես Ալշե (հայ.՝ Աղձինք), նույնպես Հայաշա (=Հայք) ևն կազմած են հայ ազգին գլխավոր զանգվածը։ Ի հարկե, նաև Արարատյանք (կամ «Ալտուրոտյանք») կամ Ուրարտացիք։ Տակավին որոշ չէ, թե ուսկի՞ց եկած ըլլան Ուրարտյանք։ Բայց ասոնք նախ Վանա ծովու շուրջը կը նստեին. և ասկե սկսած են իրենց տիրապետական արշավանքը։ Բայց տիրած են Հայաստանի միայն մեկ մասին։ Արևելք իրենց իշխանությունը չէ անցած Արարատյան դաշտին անդին. դեպ ի հյուսիս հասած են Սևանա լիճը և Զարիշատի լիճը (Կարսի հյուսիսը). հյուսիս-արևմուտք հասած են միայն մինչև Բասեն (Կարին, Դերջան, Եկեղյաց ևն շուրհիս ուրարտյան արձանագրություններ)։ Դեպի հարավ միայն հղորեղած են, և Արածանվո գծով հասած են Եփրատ, ուստի Մեծ Հայոց արևմտյան սահմանը։ Մոփքաց և Աղձնյաց աշխարհաց համար միշտ կռված են Ասորեստանյաց դեմ. տեղ-տեղ անշուշտ ուրարտյան գաղթականությունը ծագած են. բայց նույնն ըրած են հոն նաև Ասորեստանյայք։ Ուստի Ուրարտացիք հոս միայն տիրող խավն էին. նաև Հայաստանի մյուս մասերուն մեջ ալ միայն արապետողներ եղած պիտի ըլլան։

Հայաշա-ներն ի հարկե անհետ չէին եղած, ո՛չ ալ նույնպես Մանդա-ները՝ արևելյան Հայաստանի մեջ։ Առհասարակ այս արևելյան Հայաստան (ուստի նաև Արարատի դաշտը) անցման ճամբան էր ազգաց։ Իրանյանք և Հնդկիք ի Միտաննի, ուստի ի հյուսիսային Ասորեստան և ի հարավային Հայաստան, այս ճամբով եկած են։ Ուստի Հայաստան ապահովապես չէր միաձուլվել «Ուրարտեան»։ Եթե այսպիսի միաձուլվ ժողովուրդ մ'ըլլար, անհասկանալի կը մնա, թե ինչու արձանագրությունը անընդհատ արշավանքներ կը հիշեն՝ երկիրն իրենց ձեռքը պահելու համար։ Ուրարտյանք «Կավկասյան» էին։ Չեմ կարծեր։ Եվ ո՛չ կարողացած են հասնելու մինչև Կուրի գիծը, ո՛ր մնաց թե մտնելու բուն Կավկասյան աշխարհ մը՝ օրինակ ի Վրաստան։ Իբր «Կավկասյան»՝ այս կետը չի մեկնվիր։

Հայաշայեն ևն ետքը՝ հայ ազգը կազմելու նպաստած են արքա աշխարհին Arman (Ուրմիո լճին շուրջը)։ Ասոնք Հայաստան մտած են՝ Մարաց արշավանքի հետևութեամբ։ Անոր համար Արմաեիա, Արմիեիա ևն միայն անագան արձանագրությանց մեջ կ'երևան. և Դարեհի ժանոթ արձանագրությանց մեջ տակավին մնացած է Ուրաւսում (Ուրարտու)՝ Բաբելական խմբագրության մեջ։

Կարծեմ թե J. Marquart-ի այն գաղափարն ուղիղ է, այն, թե Հայք զինվորական գաղթականություն ըլլան, զորոնք հոն բերած են մարք՝ աշխարհը պահելու համար։ Միայն թե անոնք չէին ճայք արևմուտքեն, այլ «Արմենք», այն է՝ արքա Արման աշխարհի։ Այս բնակչությունն անշուշտ Երանյան էր. և անով կը մեկնվի այն մեծ ազգեցությունն, զոր ըրած է Երանեան լեզուն Հայերենի վրա։ Այս Արմաեի ի վերջոյ ձուլվեցան. բայց այս ժամանակե են անշուշտ այլ

և այլ նախարարական տոհմեր, որոնք հայ պատմության մեջ դեր կը խաղան. ուրիշներ ի հարկե՝ Պարսկական և Պարթև ժամանակե:

Այսպես կը մտածեմ հայ ազգի կազմության մասին. և ասով կը մեկնվի. թե ինչո՞ւ Արմենիա պաշտոնական նոր հորջորջանքը Հայոց քով սովորական չեղավ. թույն Հայք ավելի գերիշխող եղած են:

Թե ինչ էր Հայաշայե, Մանդայե ևն հառաջ՝ Հայաստանի մեջ, տակավին լավ չէ քննված...⁴³:

14. ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄՅԱՆԻՆ

Վիեննա, 5 հուլիս, 1932

Մեծարգո առ. Վ. Թորգոմյան,

Սիրելի բարեկամ.

Ձեր 30 հունիսի պատվական քարտն ընդունած եմ. բայց պատասխանը թերևս գոհացուցիչ չերևա Ձեզի. Ս. Խաչի վարժարանի այցելության ճիշտ թվականը չեմ հիշեր, միայն ընդհանուր գծերով կրնամ ճշտել:

Ես Կ. Պոլիս եկած եմ 1909 աշնան և մնացած երեք տարի, որոշ շրջան մը վանաց մեծավորության, որուն կրկնումեն հրաժարեցա կանխավ: Արդ այս երեք տարիներեն ամբողջ տարի մը (մայիս 1910—մայիս 1911) Կ. Պոլիս չէի, այլ Հայրենիքս (Կարին-Խոտորջուր). Կ. Պոլսեն ելա 1912 դեկտեմբերի վերջերը՝ հանգուցյալ հ. Գրիգորի Գալեմբյարյանի և գեր. Գրիգոր արքեպ. Գովրիկյանի հետ, որոնք Կ. Պոլիս < > այցելության եկած էին. այնպես որ 1913-ի նոր տարիեն շաբաթ մը հառաջ արդեն դարձյալ Վիեննա կգտնվեի⁴⁴: Ասկե հառաջ 1912 սեպտեմբերի ստիպված էի Բուլգարաց(“) հիվանդանոցը մնալ՝ գործողության մ'ենթարկվելու համար: Ուստի այցելությանց համար կը մնան ժամանակներս՝ 1909 հոկտեմբեր < > մինչև 1910 ապրիլի վերջ և 1911 հունիս մինչև 1912 սեպտեմբեր < >. ընդ ամեն իրը մեկուկես տարի: Ինձի այնպես կ'երևա, թե 1911—12 միջոցին ըլլալու է այցելությունը: Բայց՝ ինչպես ըսի՝ ճշգրտագույն ժամանակն այլ ևս չեմ հիշեր:

⁴³ Նամակի ամբողջական բնագիրը և նրա հայերեն վերաշարադրանքը մեզ մատչելի չեն: Սույն հատվածը հանված է («Հանդես ամսօրյա», 1934, № 1, էջ 28), որին Ն. Ակինյանը կցել է այս բացատրականը. «Հետևյալ տողերը հայերեն ամփոփումն է գերմաներեն նամակի մը. զոր գրած է հ. Ն. Տաշյան առ ուսուցչապետն Յ. Կարստ 26—29 հունիս 1931 թվականով ի Բադ-Հալլ, ուր կը գտնվեր նույն ժամանակ՝ օգտվելու համար տեղվույն ջերմուկներեն:

Ամփոփումն կատարված է հեղինակին ձեռքը: Կը ներկայացնենք զայն անփոփոխ, ի բաց հապավելով միայն մուտքն և վերջավորությունը, որոնք կը հային ուրիշ խնդրոց: Հեղինակին մտադրությունն էր ընդարձակել տեսությունս և իբրև առանձին բաժին մը կցել «Հաթեր եւ Ուրարտեանք» գործին» (նույն տեղում, էջ 338): Նամակի սկիզբն, անտարակույս, «Վիրք» ցեղանվան ստուգաբանության է նվիրված եղել: Իսկ թե դրանից բացի, «մուտքի» և «վերջավորության» մեջ ինչ հարցեր են քննության առնվել, դժվարանում են կռահել: Պարզ է մի բան. մեծագույն նրբանկատությամբ, բայց և հիմնավոր, Տաշյանը հերքում է Յ. Կարստի «տեսությունը» հայոց ծագման վերաբերյալ, ինչպես հայերենի մեջ ալարոյան և նախաբասկյան տարրերի գոյության կարստյան վարկածը (Կարստի այդ տեսության վերլուծությունը տե՛ս է. Աղա-յան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958, էջ 399—408):

⁴⁴ Գ. Գալեմբյարյան (1862—1917) և Գ. Գովրիկյանը Վիեննայից դուրս էին եկել 1912 թ. սեպտեմբերի 25-ին և մոտ երկու ամիս Կ. Պոլիս և Ջմյուտնիա մնալուց հետո, կրկին Վիեննա վերադարձել 1912 թ. դեկտեմբերի 23-ին: Հետևաբար Տաշյանն ևս Վիեննա է հասել նույն դեկտեմբերի 23-ին, («Հանդես ամսօրյա», 1917/18, № 1—12, էջ 118):

Խնդրելով ներողություն լավագույն պատասխան մը տալ անկարող ըլլալու և հարգանք ողջունել մնամ

Ձերդ

Հ. Հ. Տաշյան

Կ<րոնավոր> Մ<խիթարյան>

Ինքնագիրը պահվում է՝ ԳԱԲ, Վ. Թորգոմյանի թղթեր, № 1224:

ИЗ ПИСЕМ ЯКОВА ТАШЯНА

П. О. АКОПЯН

Резюме

Данная публикация охватывает тексты (с обстоятельными комментариями и предисловием) четырнадцати писем крупного арменоведа-филолога, лингвиста и историка, венского мхитариста Якова Ташяна, написанных в период с 1895 по 1932 гг. и адресованных академику Н. Я. Марру, писателю и общественному деятелю Аршаку Чопаняну, ученым-филологам Галусту Тер-Мкртчяну, Григору Халатянцу, Левону Мсерянцу, Ваграму Торгомяну и Иозефу Карсту. В письмах затрагиваются вопросы древнеармянской литературы и языка, армянской палеографии, а также проблемы формирования армянского народа. Одновременно они являются важными источниками для лучшего понимания характера, личной жизни и научных интересов ученого.

Оригиналы публикуемых писем хранятся в Архиве АН СССР (Ленинград), в Матенадаране и в Музее литературы и искусства им. Е. Чаренца Министерства культуры Арм. ССР.